ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻ

23 SEP 2009

215
Յա-30

ՀԱԿԱՓՈՒՌԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1931

215
34-30 սգ

ՑԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻՑ

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐԶԱԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Թարգմ. Ռ. ՑԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

15687-57

09.07.2013

3489

Գետիրատի տպարան
Գլավլիտ 6890 (բ)
Հրատ. 1886
Պատվեր 5564
Տիրաժ 4000

ՀԱԿԱԿՐՕՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՈՑ. ՀԱՐՁԱԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ*)

Շրջադարձը թեորետիկական ճակատում կատարվում է հենց սոցիալիստական ծավալուն հարձակման մոմենտում։

Մեր հնգամյակի չորրորդ տարվա, վճռական տարվա, առաջին յեռամսյակի առաջին հանրագումարները ցույց են տալիս, որ մենք այստեղ անտարակույս հաջողություններ ունենք և որ վոչ միայն մեր պլաններն են իրագործելի, այլև իրագործելի յե այն լոզունգը, որ տվել է կուսակցությունը և ընդունվել է մասսաների կողմից։—ավելի ճիշտ ասած նույնիսկ մասսաների կողմից առաջադրած հնգամյակը չորս տարում կատարելու լոզունգը։

Արդյունաբերության միքանի ճյուղերում, ինչպես՝ որինակ, նավթի ճյուղում, մենք նույնիսկ 2½ տարում ավարտեցինք այդ հնգամյակը։ Մենք այժմ արդեն բայլշևիկական այս չորրորդ դարնանը, մեր ցանքի ծավալման իսկական կոլեկտիվային դարնանը, գյուղացիական չքավորական և միջակային տնտեսությունների մոտավորապես կեսը ունենք կոլտնտեսությունների մեջ։ Տարվա վերջին անտարակույս տնտեսությունների կեսից ավելի կունենանք**)։ Այս տարի մենք 581 նոր ձեռնարկություն ենք գործի դնում, ընդամենը՝ այդ ձեռնարկություններից մի քանիսը համաշխարհային նշանակություն ունեցող գիգանտներ են հանդիսանում*)։

Ահա հիմնական փաստեր, որոնց մենք նկատի պետք է ունենանք։

Իսկ այս տարի մենք կազմակերպում ենք 1040 նոր ՄՏԿ, որոնցից ամեն մեկը գյուղատնտեսության մեր կոլեկտիվացման ամրություններից մեկն է։

---

*) 1931 թ. ապրիլի 7-ի ՄՄԴԸ համամիութենական խորհրդակցությանը աված զեկուցման մշակված սղագրությունը։

**) Արդեն առ 1-ը ոգոստոսի կոլտնտեսություններում ընդգրկված են գյուղացիական չքավորա-միջակային տնտեսությունների 57,9 տոկոսը։ Ծանոթ. խմբ.։

*) 1931 թ. առաջին կիսամյակին 581 կառուցվող նոր ձեռնարկություններից արդեն շահագործման են անցել 186 նոր գործարաններ, ֆաբրիկաներ, շախտեր և այլն։ Ծանոթ. խմբ.։

Սոցիալիստական վերակառուցման այս մեծադույն խնդիրը կապված է իր չափերովն ու խորությամբը դեռ չտեսնված կուլտուրական հեղափոխության, սոցիալիստական հասարակայնության բոլոր ձևերի զարգացման, իր տեսակի, ինչպես Մաքսիմ Գորկին է արտահայտվում, որընեսանսի, վերածնության հետ։

Իսկապես ասելով չի կարելի տվյալ դեպքում վերածնության մասին խոսել, քանի որ մենք այստեղ բոլորովին նոր կարգի յերևույթներ ունենք—պրոլետարական կուլտուրայի ծավալում, սոցիալիստական շինարարության, գյուղատնտեսության սոցիալիստական ձևերի ծավալում, այլ ոչ վերածնություն։

Կուսակցության դրած խնդիրը,— նոր կադրերի նախապատրաստության խնդիրը,—կյանքի կոչեց իր չափերովը բոլորովին չտեսնված ամեն տեսակի տեխնիկումների, բուհերի և բուհերի ծավալումը։ Մենք նոր դպրոցների, ակումբների, ժողովրդական տների հսկայական ցանց ունենք։Առանձնապես պետք է նշել մեր մամուլի զարգացումը, որը վկայում է մեր յերկրի բանվոր դասակարգի և աշխատավորների կուլտուրական և քաղաքական հսկայական աճման մասին։Ցեռ առաջ չեմ բերի մեր կենտրոնական լրագրերի յերկրային, շրջանային, կոլտնտեսական, պատի ,գործարանային, ցեխային և ուրիշ ամեն տեսակի լրագրերի տիրաժների թվերը։Մեզանում այնպիսի գործարաններ կան, որոնք միքանի տասնյակ լրագրեր են բաց թողնում։ Մեկ գործարանը, որինակ, «Կարմիր Գուտիլովեցը» կամ «Մանգաղ և Մուրճը», միքանի տասնյակ լրագրեր են բաց թողնում, ընդ ամին՝ նրանցից մի քանիսը—շատ բարձր տիրաժով։ Բավական կլինի ասել, որ արդեն այժմ «Պրավդան» 1·600·000 տիրաժ ունի։ տարվա վերջին մենք պետք է տանք 2 միլիոնից ոչ պակաս, իսկ հնգամյակի վերջին միայն «Պրավդայի» տիրաժը հավանորեն կհասնի 3,5–4 միլիոնի։

Ահա այս բոլոր փաստերը ինկատի պետք է ունենալ հակակրոնական աշխատանքի հերթական խնդիրները նշելիս։ Այս խնդիրները պետք է կապել ՍՍՀՄ–ի ներսումը կուլակության դեմը ծավալվող դասակարգային սուր պայքարի հետ, կուլակության՝ որ հենվում է յեկեղեցու և կրոնի վրա։ մեր հակակրոնական աշխատանքը պետք է շաղկապել կուլտուրական ,տնտեսական հսկայական աճման հետ, ուսում առնելու հսկայական ձգտման հետ, բանվորական և գյուղացիական լայն մասսաների հսկայական հետաքրքրության հետ՝ հանդեպ այն բանի, որպեսզի այդ նորը ոչ միայն շաղկապենք առորյա աշխատանքի հետ, այլև ավելի խորապես դիտակցենք, մշակենք մի նոր աշխարհահայացք, որը մի քանի տարիներով առաջ ընդդրկեր ամբողջապես մեր բոլոր շինարարությունը, որպեսզի կարելի լիներ տեսնել թե ուր է տանում այդ շինարարությունը, այլ ոչ թե սողալով ընթացող վորձադեսակ–եմպիրիկի նման—մասսան նույնպես չի ուզում սողացող եմպիրիկ լինել—տեսնել միայն այսորվա որը, այսորվա ժամը։

Ի՞նչն է հիմնականը այն հեղափոխության մեջ, որը կատարվում է մեր աչքերի առաջ։

Այդ՝ ամենից առաջ, պլանային սկզբունք մտցնելն է ժողովրդական վողջ տնտեսության մեջ։ Պլանային սկզբունքը հետզհետե ավելի ու ավելի դուրս է մղում պատահականության, անակնկալի տարրը, նրա՝ ինչվոր ժողովուրդը սովոր է բացատրել «բաղդի», «նախախնամության», «ճակատագրի կամքով»։ Պլանայնություն մտցնելը մեր տնտեսության մեջ աշխատավորների լայն մասսաներին ընտելացնում է այն բանին, թե պլանով է շարժվում կյանքը, որը կառուցում է մարդկությունն ինքը, աշխատավորությունն ինքը։ Գյուղացիական միջակային լայն մասսաների անցումը սոցիալիզմի ուղին—այդ՝ ի հարկե, դասակարգային դաժանագույն պայքարի, դասակարգային թշնամուն ընկճելու արդյունքներից մեկն է։ բայց այդ ել նույնպես արդյունք է այն հսկայական աշխատանքի, որը հնարավորություն տվեց մեզ պլանային տնտեսություն կառուցելու։ Հիմնականն այդ կողմից՝ ընդարձակումն է, սոցիալիզմի բազայի հսկայական ընդարձակումը։

Ահա պլանային սկզբունքի այդ իրագործումը, որը շաղկապված է հասարակական բոլոր հարաբերությունների խորագույն հեղափոխության հետ, հող է նախապատրաստում մատերիալիստական ներդաշնակ աշխարհահայացք մշակելու։ ոչ թե առանձին մարդու, ոչ թե առանձին մանր խմբերի, այլ աշխատավորների լայն մասսաների մեջ, ամբողջ բանվոր դասակարգի մեջ, որը ոչ միայն հասկացավ այդ աշխարհի կառուցվածքը, հասարակական հարաբերությունների եությունը, այլև 1917 թվականից սկսած կարողացավ արմատապես փոխել այդ հարաբերությունները, նրանց տեղը նոր, սկզբունքորեն այլ հարաբերություններ ստեղծելով։

Բանվոր դասակարգը իր հեղափոխական պայքարի և շինարարության ամբողջ ընթացքով նախապատրաստված է ընդունելու մատերիալիստական ներդաշնակ աշխարհահայացքը։

Բայց այն, ինչ որ կատարվում է այժմ, պրոլետարական հե-

զարգացման տասնհինգերորդ տարում, նշանակում է նախապատրաստություն նաև գյուղացիության լայն մասսաների անցման դեպի այդ աշխարհահայացքը:

Ցերը գյուղացիները անհատականապես եյին վարում տնտեսությունը, յերբ նրանք կախումն ունեյին շահագործողներից, կուլակից, կալվածատիրոջից, առևտրականից և այլն, յերբ նրանք կրոնի վրդով եյին դաստիարակվում,—նրանք հակամետ եյին իբրև աշխարհի ամեն տեսակի իդեալիստական աղավաղումների, իդեալիստական աշխարհահայացքի:

Այն, ինչվոր կատարվում է այժմ կապիտալիստական վերջին դասակարգի վերաբերությամբ, կուլակության վերաբերությամբ, նախապատրաստում է մասսային զգալու, վոր իրենց ձեռքումն է այս աշխարհի բաղդը, վոր իրենք կարող են այնպես կառուցել, ինչպես վոր պետք է աշխատավորների շահերի տեսակետից:

Ամենամոտիկ տարիներում (մենք նոր հնգամյակ մշակելու առաջն ենք կանգնած), յերբ ամենամեծ դժվարությունները կլուծվեն, յերբ կվերացվեն նյութական ամենագլխավոր խոչընդոտները պրոլետարական ավելի խոր կուլտուրայի ծավալման համար, վորն ընդգրկում է կյանքի բոլոր կողմերը, մենք վկա կլինենք շատ բազմաթիվ տեղաշարժերի, վորոնք կատարվելու յեն աշխատավորների ամենալայն մասսաների աշխարհահայացքի մեջ: Ամենամոտիկ տարիները կնախապատրաստեն գյուղի և քաղաքի միջև յեղած տարբերության վերացումը, նշանակալից չափով վերացումը այն արդելքների, վորոնք խանգարում են դասակարգերի վերացմանը. անտարակույս, ամենամոտիկ հնգամյակը դարձյալ մի վճռական քայլ կանի դասակարգերի լիակատար վերացման ուղղությամբ:

Կհաջողվի՞ մեզ այդ բանն արդյոք ամենամոտիկ հնգամյակում, թե՞ ավելի շատ ժամանակ կպահանջվի,—այժմ դժվար է ասել, սակայն՝ համենայնդեպս, ամենամոտիկ հնգամյակը ընդհուպ կմոտեցնի մեզ այդ բանին: Այդ նշանակում է, վոր ամենամոտիկ ժամանակներում մենք այնպիսի մի ամբողջ շարք հակասություններ կլուծենք, վորոնք հատուկ են կապիտալիստական հասարակության:

Իհարկե, ճիշտ չեր լինի այստեղ յեզրակացություն հանել, թե մենք այժմ արդեն կանգնած ենք դասակարգային պայքարի վերացման առաջ: Հենց այդ վերջին ետապում դասակարգային պայքարը անողոք բնույթ է ստանում. չե՞ վոր սոցիալիզմի աճումը մեր յերկրում և հեղափոխական շարժման աճումը մյուս յերկրներում լուծում են «ո՞վ՝ ում» հարցը վոչ միայն ԽՍՀՄ մասշտաբով, այլ և համաշխարհային մասշտաբով: Ուստի և ամենամոտիկ տարիներում, ամենամոտիկ տասնամյակում, դասակարգային պայքարն ե՛լ ավելի կսրվի: Առանց կանգ առնելու այստեղ համաշխարհային ճգնաժամի, արդյունաբերական և ագրարային ճգնաժամի բնութագրի վրա, վորն անդրադառնում է աշխատավոր դասակարգերի և բուրժուազիայի ամբողջ կյանքի վրա, նշենք այդ յերևույթների վորոշ կապը այն խնդիրների հետ, վորոնք ծառացած են հակակրոնական շարժման առաջ:

Մենք ունենք գործազրկության հսկայական աճում կապիտալի յերկրներում, գյուղացիության լայն մասսաների քայքայում. բանվոր դասակարգը նշանակալից չափով դառնում է անտուն-անթեվան, խնամազուրկ: Ամերիկայում գործազուրկների նշանակալից մասսաները, վորոնց վտարեցին բնակարաններից, այժմ քոչում են մեկ քաղաքից մյուսը, վորպես թափառաշրջիկներ: Այդ բանն՝ իհարկե, ամենից ավելի քիչ է նպաստում, վորպեսզի բանվոր դասակարգը կապիտալիստական աշխարհի խելացիությանը հավատար (վորին ուսուցել են նրա բոլոր աղանդների տերտերները շատ դարերի ընթացքում):

Բուրժուազիան ինքը այդ ճգնաժամը բնութագրում է, ըստ գործի եյության, վորպես անելանելի ճգնաժամ:

Բուրժուական լրագրերի նույնիսկ նոր տարվա առթիվ գրված հոդվածները, վորոնք սովորաբար ծիածանի գույներով շողշողուն հեռանկարներ են պատկերացնում և ընթերցողներին ամենատեսակ հույսեր են խոստանում, իջեցրած տոնով գրվեց: Այս տարի նոր տարվա լրագրերը յերփներանգ գույներով այնպես են բնութագրում կապիտալիստական հասարակությունը, վորպես «խավար», «աղջամուղջ», «խառնաթնթոր»: «Թայմզ» լրագրում, որինակ, նոր տարվա առթիվ գրված հոդվածում գրել եյին, վոր այժմ «մենք ծանր ժամանակ ենք ապրում: Բայց ի՞նչ է նշանակում այդ ծանր ժամանակը մեր յերկրավոր կյանքում,—հարցնում է «Թայմզը» իր ընթերցողներին և հիշեցնում իր ընթերցողներին, վոր մենք շատ ուրախություններ և ավելի դեղեցիկ կյանք ունենք անդրդեղեմանական աշխարհում»:

Այդպիսիք են նոր տարվա այն մխիթարանքները, վոր մատուցանում է իր ընթերցողներին «Թայմզը»: Այդ բանը դժվար թե կա-

բողանա վորևէ մեկի ծննդյան տոնին հարմար ձևով տրամադրել։ Այդ՝ բուրժուական սովորական փաստաթղթությունն է—արդումենտացիան—վորը անդրդվելիորեն ամանակական լավագույն կյանքի հավատով ուզում է հեռանալ յերկրի ձախորդությունների։ Այստեղից են բղխում կրավորականությունը —պասսիվությունը —անելանելիությունը, վորոնք տանում են դեպի այն, վոր ներկայումս բուրժուազիայի մեջ ծաղկում են ամեն տեսակի միջնադարյան միստիկական թեորիաներ։

Գորկին միքանի հոդվածներում խոսում է այդ տրամադրությունների մասին. նա նշում է, վոր այժմ մի ամբողջ շարք յերկրներում արշավանք է տարվում դիտության դեմ։ Կայիոն վերջերս գրում էր, վոր յեթե մարդն ուզում է պահպանել իր գոյությունը, նա պետք է շտապեցնել անի նոր Պրոմեթեոսին—դիտությունը։ Հարավամերիկյան գրող Լոմն Ուգո Վասան ասում է, թե պետք է յերեսակայության թևերը կորել է, թե պետք է ձգտել սիրելու պարզ իրերը, հասկանալու նրանց խորությունը։ Ամեն տեսակի պլաններ են ստեղծվում այն բանի վերաբերությամբ, թե չի կարելի արդյոք հետ դառնալ դեպի արտադրության պարզ գործիքները և փորձեր են յեղել լրջորեն իրագործելու այդպիսի պլանները։ Այսպես, որինակ, գործադրությունը վերացնելու համար Ամերիկայի միքանի քաղաքներում արգելվում է նորագույն գործիքների գործադրությունը ձյունը մաքրելու համար։ Առաջարկում են մաքրել ձյունը ավելով և թիակով։ Իհարկե, այդ միջոցները կարող են աշխատանք տալ միքանի տասնյակ, հարյուրավոր, վերջապես հազարավոր գործադուրկների, բայց վոչ միլիոնավորների։ Մինչդեռ գործազուրկների թիվը հետզհետե ավելի ու ավելի յե մեծանում։

Հեղափոխական ալիքի հսկայական աճում է նկատվում վոչ միայն կապիտալիստական յերկրներում, այլև մի շարք գաղութային և կիսագաղութային յերկրներում։ Այս փաստերը հանրածանոթ են և յես նրանց վրա կանգ չեմ առնում։ Իմպերիալիստական մամուլը և իմպերիալիստների կուսակցությունները հույս ունեին, վոր յեթե իրենց հաջողի արտաքսել մեզ Չինաստանից, չինական խոշոր կենտրոններից, այնտեղ մի ամբողջ շարք պրովոկացիոն խաղեր սարքելով, ինչպես, որինակ, Շանհայում, այդ դեպքում դրանով էլ կհաջողվի իրենց վերացնել, դադարեցնել կոմունիստական հեղափոխական շարժումը Չինաստանում։ Արդեն շատ ժամանակ է անցել

այն որվանից, յերբ նրանց հաջողվեց պրովոկացիայի միջոցով հեռացնել խորհրդային աշխատավորներին Չինաստանից։ Սակայն, հեղափոխական շարժումը Չինաստանում վոչ միայն կանգ չառավ, այլ և աճում է, չնայելով վոր չինական կոմկուսակցությունը չատ անդամ է զրկվել իր ղեկավարներից ու առաջնորդներից, չնայելով վոր չինական կոմկուսակցության տասնյակ հազարավոր անդամներ տառացիորեն սպանվել են։ Չնայելով այս ամենին, հեղափոխական շարժումն աճում է, շարունակ նոր ու նոր դավառներ խլելով։

Մենք բոլորս կարդացել ենք Չինաստանի Խորհուրդների II Համագումարի մասին, Չինաստանի հսկայական Կարմիր բանակի մասին, վորն այժմ Խանկոու քաղաքին է սպառնում. Չինաստանում ընդարձակ շրջաններ կան, վորտեղ արդեն բավական ժամանակ է ինչ խորհրդային հասարակարգ, սեփական խորհրդային դրամական սիստեմ է մտցված և այլն։

Մենք տեսնում ենք հեղափոխական շարժման ծավալումն ու խորացումը նաև Հնդկաստանում, հակառակ բուրժուական-ազգայնական կուսակցությունների փորձերին՝ իրենց հեգեմոնիային յենթարկելու հեղափոխական շարժումը. նա ընթանում է նաև հակառակ այն յեկեղեցական տարրերին, վորոնք ուղղակի դաշինք են կնքած ազգային բուրժուազիայի հետ։

Գաղութային յերկրներումն էլ պրոլետարիատը հեգեմոն դեր է ձեռք բերում հեղափոխական շարժման մեջ։ Այդ նշանակում է, վոր անատոլիական շարժումը ամենահսկայական դեր է ձեռք բերում վոչ միայն Յեվրոպայում և ծավալվում է վոչ միայն մեր յերկրում, այլև մի ամբողջ շարք ուրիշ յերկրներում, ավելի ճիշտ—ամբողջ աշխարհում։ Անտարակույս մենք ամենամոտիկ տարիներում այդ շարժման ծավալումը կտեսնենք նաև այնպիսի յերկրներում, վորտեղ մինչև վերջին ժամանակները տիրում էր սատանայական—տեոկրատիան։ Մոնղոլիանում աղդարնակչության մոտավորապես 40 տոկոսը մինչև վերջերս պատկանում էր հոգևորականության զանազան խավերին։ Դա մի հսկայական կազմակերպություն էր, վորը պարունակում էր իր մեջը վոչ միայն հոգևորականությանը, բառի հատուկ իմաստով, այլ և այն մարդկանց, վորոնք սպասարկում էին աղոթատներին, կուռքերին, դացաններին — տաճարներին — և այլն, դրոշոցների հսկայական ցանցին, հսկայական տնտեսության. եյապես

ժողովրդական հարստության մեծ մասը կենտրոնացած էր այդ հոգեվորականության ձեռքերում: Թեպետև համեմատաբար ավելի ուշ սկսվեց—հեղափոխությունից միքանի տարի հետո—այդ հոգեվորականության կուլակաթափությունը: Նա ընթանում է արատավոր ազգաբնակչության յուրատեսակ կոլեկտիվացման հետը միասին,— այն էլ բավական հաջողությամբ: Վերջին 2½ տարվա ընթացքում (մոնղոլները մեզ չեն ընդունում, այլ դնում են իրենց ուղիով) Մոնղոլիայում հաջողվեց մոտավորապես կիսով չափ պակասեցնել այդ հոգևորականության խավը. հոգևորականությանը պատկանող անասունների և ուրիշ դույքի նշանակալից մասը հանձնված է արատական բատրակային և հովվական ազգաբնակչությանը: Հոգևորականության նշանակալից մասը լքում է վանքերը և դրանով էլ քայքայվում է վանականությունը: Հեղափոխությունը, վոր սկսված է այդպիսի յերկրում, վորպիսին Մոնղոլիան է, տեղի յե ունենում նաև Արևելքի մյուս յերկրներում, վորտեղ ինչպես որինակ, Հնդկաստանում և Չինաստանում, հոգևորականության իշխանությունը նույնպես դեռ բավական զորեղ է:

Սհա՝ այդ վանդի հանդեպ, յերբ ԽՍՀՄ-ում մեր սոցիալիստական շինարարության հաջողությունները դուրս են քաշում կապիտալիստական վերջին դասակարգի վոտքի տակից վերջին հողը, յերբ «ո՞վ՝ ում» հարցը հիմնականում արդեն ըստ եությունն լուծված է,—կապիտալիստական յերկրներում նույնպես ծառացած է այդ՝ «ո՞վ՝ ում» հարցը.

Համենայն դեպս կապիտալիստական բոլոր յերկրների պրոլետարիատի առաջ ծառացած է իշխանությունը նվաճելու խնդիրը, բոլոր յերկրների պրոլետարիատի առաջ ծառացած է հեգեմոնիայի—խնդիրը՝ կատարվող հեղափոխության մեջ:

Ի՞նչ դեր են խաղում այստեղ յեկեղեցին և կրոնը:

Հայտնի յե, վոր այդ պայքարում ամեն տեղ յեկեղեցական կազմակերպությունները համախմբվել եյին ԽՍՀՄ դեմ: Ամբողջ աշխարհի աշխատավորները լավ դիտեն, թե ինչպես եր առաջ գալիս «խաչակրաց արշավանք» կազմակերպելու այդ փորձը, յերբ պապը պաշտոնական կոչ ուղղեց կարդինալ Բաղիլը Գոմպելիին, առաջարկելով հատուկ մաղթանք կազմակերպել, «բոլոր հնարավոր միջոցներով պայքարելու այդ սրբապիղծ չար փորձերի դեմ և ապտակելու կոչ անել ամբողջ աշխարհի հավատացյալներին»: «Այդ մաղթանքին,—գրում եր պապը—մենք պետք է աղաչենք

անարատ սուրբ կույս Մարիամին, աստվածամորը, նրա վողջախոհ ամուսին սուրբ Հովսեփին (ծիծաղ), համաշխարհային յեկեղեցու հովանավորին և Ռուսաստանի հատուկ հովանավորներ սուրբ Անժելիկին—իհարկե վոչ Բալաբանով Անժելիկին— (ծիծաղ), սուրբ Հովհաննես-Մկրտչին, սուրբ Նիկոլային, սուրբ Վասիլին և սուրբ Կիրիլին ու Մեթոդին բոլոր սուրբերի հետ միասին և հատկապես սուրբ Թերեզային, վորոնց մենք հատկապես հանձնում ենք այդ հոգիների ապագան»:

Մենք բոլորս շատ զգացված եյինք, վոր պապը այդ հարգելի սրբերին հանձնեց մեր հոգիների խնամակալությունը, բայց այդ ամբողջ պատմությունը ամենախայտառակ կերպով խորտակվեց:

Ճիշտ է, հաջողվեց ինչվոր մի բան սարքել այդ գործի շուրջը, մեծ աղմուկ բարձրացավ, բայց արդյունքն այն յեղավ, վոր խոշոր մասսաներ հեռացան յեկեղեցուց. պապի առաքելական թղթի հետևանքով քրիստոսի հոտից այս ու այն վոչխարները հասկացան, «ինչ՝ ինչի համար», վորովհետև «խաչակրաց արշավանքի» շուրջը սուր պայքար հառաջ յեկավ, վորը բաց արեց նրա դասակարգային իմաստը: Մենք այդ ժամանակ լուռ չեյինք, մեր ընկերներն Արևմտյան Յեվրոպայում արին այն ամենը, ինչ վոր կարող եյին: Հետևանքն այն յեղավ, վոր դրանից մի վորոշ բարիք ստացվեց մեզ համար:

Բայց մենք մեր հոգիների փրկության համար հոգացող սուրբ հայրերի մի ամբողջ շարք յելույթներ էլ ունենք: Վերջերքս պապը գարձյալ կոչ արեց դիմել «համեստ աղոթքի» ԽՍՀՄ տանջվողների համար: Նա կոչ եր անում. «մեծ վշտով աստվածային ողնությունը խնդրել Մեկսիկայում ապրող մեր յեղբայրների համար և մանավանդ այն անմոռանալի մարտիկների համար, վորոնք հանուն տեր հիսուս քրիստոսի սիրու տանջվում են և մեռնում Ռուսաստանում և Սիբիրում: Նույնպես պետք է աղոթել նաև Չինաստանում յեղող մեր սրտին սիրելի միսիոներների համար, վորոնց վիճակվում է մեծ չարչարանքներ կրել այդ անյեղր յերկրում»:

Հիշեցնեմ միքանի ուրիշ ամենասուրբ հայրերի յելույթների մասին, ինչպիսին է Դերզեմսկու յեպիսկոպոսը, վորը վրդովված եր նրանով, վոր բանվորները, վորոնք ճնչվածների ամեն մի կոչին և դիմումին ամենաարագ կերպով արձագանք տվողներն են, անտարբեր են ԽՍՀՄ-ում տեղի ունեցող «սարսափների» և կրոնական «հալածանքների» հանդեպ:

«Աշխատավորների վոչ մի խավ,—ասում էր Դերդեմոկու եպիսկոպոսը պարլամենտում,—այնպիսի արագությամբ չի արձագանքում արդարության կոչերին, ինչպես լեռնագործական այս մեծ մասսան, վորոնց հետ ես՝ իբրև Դերդեմոկու եպիսկոպոս, պատիվ ունեմ վորոշ կողմից կոչված լինելու։ Սակայն բանվորն այդ բաներն այնպես չի տեսնում, ինչպես վոր կան, այլ դասակարգային նախապաշարմունքների միջոցով, վորով աղավաղում են իրականությունը և թաղցնում այն»։

Սուրբերի բանը վատ է, յերբ «դասակարգային նախապաշարմունքները» ընդդիմում են լայն մասսաներին։

Վերջերս «Մորնինգ Պոստը» հաղորդեց, վոր Իյորկի արքեպիսկոպոս Վիլյամ Տեմպլը մի նոր հատուկ աղոթք հրատարակեց «Ռուսաստանի համար»։ Տեմպլը հայտարարում է, վոր յեպիսկոպոսներից միջնորդություններ են ստացվել նորից նշանակել հատուկ «աղոթքի որ Ռուսաստանի համար», բայց՝ ըստ Տեմպլի խոսքերի, «արդի կացությունը մշտական աղոթք է պահանջում»։

Իրոք վոր կացությունը շատ տխուր է, յերբ նրանք ստիպված են այդ կողմից անընդհատ անցնելու (ծիծաղ)։

Բանվոր դասակարգն ինչպե՞ս և վերաբերվում այժմս յեկեղեցուն։

Տեղ-տեղ նա ոգնություն է ստանում յեկեղեցուց։

Ամբոր չի կարելի յեկեղեցու անջատումը պետությունից այնպես պատկերացնել, ինչպես վոր մեզնում վոմանք պատկերացնում են—յեկեղեցին չրջապատել՝ իբր, ցանկապատով հենց այդ ել նշանակում է անջատել յեկեղեցին պետությունից։ Փաստորեն այդպիսի անջատում կապիտալիստական յերկրներում չկա նույնիսկ այնտեղ, վորտեղ յեկեղեցին պետությունից անջատելու որենքներ կան։

Յեկեղեցին թափանցեց ժողովրդական մասսաների ամբողջ կյանքը։

Բավական է հիշել մի այնպիսի կազմակերպություն վորպիսին է «Քրիստոնեական յերիտասարդության ընկերությունը» Ամերիկայի Միացյալ Նահանգներում. մի կազմակերպություն, վոր մեկ միլիոն անդամ ունի և մոտավորապես մի այնպիսի բյուջե, ինչպես մեր Լուսժողկոմատի բյուջեն է։ Բավական է հիշել «Քրիստոնեական ուսանողների ընկերությունը», վորը վոչ միայն Յեվրոպայումն է տարածված, այլև մյուս յերկրներում, կամ՝ «Քրիստոնեական բանվոր յերիտ. ընկերություններ» Բելգիայում կամ

«Յեկեղեցական Միությունը» Գերմանիայում, վորը շատ լայնորեն է տարածված, ըստ ելության մի յեկեղեցական կազմակերպություն է հանդիսանում, ինչպես «Փրկության բանակը», Անգլիայում։

Մենք տեսնում ենք բազմազան տիպի կազմակերպություններ, վորոնք փորձում են ընդդիմել, ինչպես՝ որինակ, Բելգիայում, բանվորական յերիտասարդությանը. բելգիական կազմակերպության 800·000 անդամների նշանակալից մասը բանվորական յերիտասարդությունից է կազմված։ Քրիստոնեական այդ միությունների հաջողվում է լավ կազմակերպված դեմոնստրացիաներ տարել նույնիսկ լեռնագործական շրջաններում, վորտեղ բանվորները յերբ են կազմակերպում տոնական հագուստներ հագնելով, լեռնագործական լաստերներով, խաչով ու խաչվառներով և սաղմոսերգությամբ։

Այսպիսով չի կարելի գործն այնպես պատկերացնել. թե դասակարգային պայքարի սրումը տվյալ ետապում նշանակում է լիակատար խզում յեկեղեցու հետ։ Այդ բանը դեռ չկա։ Մասսաները դեպի այդ են գնում, սակայն, առայժմ նշանակալից չափով նրանք դեռ գտնվում են բուրժուական իդեոլոգիայի գերության մեջ, վոր պատվաստում է նրանց յեկեղեցին, կրոնը։ Կապիտալիստների ամենաբեսակի յեկեղեցական ընկերությունները հսկայական միջոցներ ունեն։ Նրանք ձեռացնում են՝ իբր թե բարեգործության միջոցով կարելի յե մեղմել իրենց ապրած ճգնաժամի ծանրությունը, գոնե փոշի յեն փչում մարդկանց աչքերին—վորևե տեղում արգանակի և հացի բաժանում են կազմակերպում, տեղ-տեղ նվերներ են տալիս յերեխաներին,—ի միջի այլոց, շատ աննշան թվով յերեխաների,—բայց դրանից շատ մեծ աղմուկ են ստեղծում, այնպես վոր այն տպավորությունն է ստացվում, թե նրանք իրոք ոգնում են։

Իսկ ի՞նչ յելք է առաջարկում յեկեղեցին այս ճգնաժամից դուրս գալու համար։

Այդ կողմից հետաքրքիր են այն նյութերը, վոր մենք հրապարակել ենք «Անտիրելիգիոզնիկի—վերջին համարի «Կապիտալի ճգնաժամը և յեկեղեցին» հոդվածում։ Այնտեղ բերված է պատեր Իոհան Բոդենբերգի հոդվածը։ «Ով վոր չի աշխատում, նա թող աղոթի։ Նա՝ ով չի ուզում աղոթել, թող չուտի, վորովհետև նա չի կատարում արարչի նրան տված բարձրագույն պատվիրանը»,—գրում է այդ դարշելի տերտերը։ Հետո նա չարունակության մեջ

բացատրում է. «իրոք, ով չի աշխատում, պետք է աղոթի. դրանում է պարունակվում, ինչպես յես եմ կարծում, գործադրկության աստվածային (՛) խորագույն իմաստը. մարդը պարտական է աստծուն, հողուն և կրոնական գործունեությանն ավելի տալ: Ով վոր այլևս չի աշխատում ժողովրդի համար, նա պարտավոր է աղոթել ամբողջ ժողովրդի բարիքի համար: Հենց այդ իմաստով է, վոր մենք ասում ենք, թե գործադուրկը մի այնպիսի գործ ունի, վորը նշանակություն ունի ժողովրդի ամբողջության համար: Նա չպետք է անձնատուր լինի իր անպետքության կամ թերադնության գդացողության: Դժբախտաբար, միայն քչերը յուրացրին գործադրկության այդ քրիստոնեական իմաստը»:

Ի դժբախտություն տերտերների, դեռ չի յերևացել այն առաքյալը, վոր գործադուրկների այդ մասսաներին յեկեղեցի առաջնորդեր, վորովհետև այդ մասսաները գրոհի յեն գնում կապիտալիստների վրա:

Շարունակության մեջ այդ տերտերը խորհուրդ է տալիս՝

«Աստվածապաշտությունների, միսիոներական յելույթների ժամանակ, կրոնական շաբաթներում, առանձին քարոզների և զեկուցումների մեջ, գրքերում և լրագրերում, թռուցիկ և կիրակնորյա թերթիկներում, մանավանդ մասսայական արձակումների և արդյունաբերության յերկարատև անկման շրջանում,—պետք եր նորից ու նորից մատնանշել և հիշեցնել թե՝ ով վոր հասարակության համար չի աշխատում, նա պարտավոր է աղոթել հասարակության համար և իրեն նվիրել հոգևորին, կրոնականին և գերբնականին»:

Ահա այն «մխիթարությունը», վոր հոգևորականությունը կարող է տալ. «դժբախտությունները—գրում է մի տերտեր՝ Ֆրիդրիխ Մուկերմանը,—յերկու տեսակ են լինում. վոմանք նայում են միշտ նրանց վրա, վորոնք իրենցից ավելի լավ են ապրում, իսկ ուրիշները նայում են նրանց վրա, վորոնք ստիպված են ավելի վատ ապրել, քան իրենք: Գուցե դու աշխատանք չունես, բայց ախր դու դեռ առողջ ես: Գուցե դու առորյա հացը չունես, բայց ախր աշխարհում բավական մարդիկ կան, վորոնք արդեն վաղուց են քաղցի մատնված: Դու դեռ արև, զարուն, անտառ, սիրելի կին, բարի յերեխաներ, մաքուր խղճմտանք ունես: Քեզ մնում է դեռ այն հույսը, թե տեր աստվածն իր հայացքին կարժանացնի քեզ: Դու դեռ հնարավորություն ունես որինակ վերցնելու սրբերից, վորոնք

ուրախությամբ եյին տանում ե՛լ ավելի ծանր և անախորժ բան»:

Ցեվ ապա, նկատելով, վոր այդ քարոզը շատ ել բարեհաճ ընդունելություն չի գտնի, նա ասում է.

«Դու գուցե հեղնորեն ժպտո՞ւմ ես (ինչպե՛սի նրբամիտ է—Ցե. Ց.) և ասում. «Նախ ինձ համար աշխատանք ճարիր, ապա թե ցին պատասխանել, վոր դու հիմար խոսքեր ես ասում—իսկական մոլախոտ՝ սոցիալիստական վարելահողից: Ցեթե մենք քրիստոնյաներ ենք, հենց միայն այդ հիմունքով մենք արդեն ամեն որ և ամեն ժամ պետք է ուրախանանք տիրոջ խաչով և ավետարանի խոսքերով»...

«Վորքան ինձ հայտնի յե, աղոթքներ կան նաև գործադուրկների համար: Այդ աղոթքները կարելի յե արտասանել մաքումդ, վերջապես կարելի յե ուրախական վիճակի հասնել սուրբ Ֆրանցիսկոսի արեղակային յերգերը կրկնելու միջոցով»:

Գուցե սուրբ Ֆրանցիսկոսի յերգերի կրկնությունը կոգնի տերտերներին, բայց համենայն դեպս այժմ սկսեցին հատուկ սրբեր վորոնելով գտնել, վորոնք ոգնում են գործադուրկներին: Այդպիսի մի սրբուհու թխեցին Շոտլանդիայում: Ներողություն եմ խնդրում տերտերներից, յես մոռացել եմ նրա անունը, բայց նա «ոգնում է» գործադուրկներին, ինչպես իրենք են ասում: Թե ինչպես և ոգնում,—այդ դեռ վոչվոքի հայտնի չե:

Ցեկեղեցին, ի հարկե, չի կարող միայն դրանով սահմանափակվել: Քարոզներն այժմ քիչ են ազդում մասսաների վրա: Ցեթե վոր այդ ե՛լի ժամանակավոր գործադրկություն լիներ..... Բայց յերբ մարդիկ տարիներով են սոված, այդպիսի քարոզներն արդեն վոչ վոքի վրա լուրջ ազդեցություն չեն անում:

Այստեղ յեկեղեցուն ոգնության է գալիս սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Նա այժմ բոլորովին ձևակերպեց իր դաշինքը յեկեղեցու հետ նրա համար, վորպեսզի ոգնի բուրժուազիային խափանելու, ճնշելու հեղափոխական շարժումը:

Սոցիալ-դեմոկրատիան ի՞նչ յելք է առաջարկում այդ ճգնաժամիցը դուրս գալու համար:

Ցես թույլ եմ տալիս ինձ մի քանի քաղվածքներ բերելու:

1927 թվականին գերմանական սոցիալ-դեմոկրատիայի համագումարում Հիլֆերդինգը հայտարարեց, վոր՝

«Կազմակերպված կապիտալիզմ՝ նշանակում է իրոք սկզբունքային փոխարինում ազատ կոնկուրենցիայի կապիտալիստական

սկզբունքի պլանաչափ արտադրության սոցիալիստական պրինցիպներով:

(Հիլֆերդինգ, 1927 թվականի ԳՍԿ համագումարի արձանագրություն, էջ 166):

Սոցիալ-դեմոկրատիայի մյուս տեսաբանը՝ Տարնովն, ասում էր, որ «եթե առաջին եղոխայի համար, անգլիական կապիտալիզմի եղոխայի համար տիպիկ են Մարքսն ու Լասսալը, որոնց հավատացնում էին, թե աշխատավարձը որոշվում է ոչ թե որևէ տնտեսական օրենքներով («վորևե»,—այդ ասում է սոց.-դեմոկրատը), թե նա կախում ունի բանվորական ուժի արժեքից և այլն, ապա չորրորդ եղոխայի համար տիպիկ է Ֆորդը, որն ապացուցեց, թե կապիտալիզմը կարող է ծաղկել և միաժամանակ բանվորներն էլ չպետք է աղքատ մնան»:

Իսկ սոցիալ-դեմոկրատ Նաֆտալին գրում էր, որ «ցիկլային զարգացումը, որի ժամանակ վերելքի և ճգնաժամի կանոնավոր հերթափոխություն էր տեղի ունենում, որի մասին գրում էին Մարքսն ու Ենգելսը, վերաբերում է կապիտալիզմի զարգացման առաջին շրջանին»:

Կարլ Կաուցկին, ինչպես հայտնի է վերջին ժամանակներս սկսեց ապացուցել, որ ճգնաժամերի պատճառները պետք է փնտրել արդեն ոչ թե արտադրության կապիտալիստական պայմաններում, այլ բնության պայմաններում: «Ճգնաժամերը բոխում են,—գրում էր նա,—մեծ մասով նրանցից, որ գյուղատնտեսական արտադրանքը չի կարող ընդարձակվել արդյունաբերական արտադրությամբ, ինչպես արդյունաբերականը, այսինքն՝ վերջինս նորից ու նորից առաջ է անցնում առաջնից: Այդ դեպքում ժամանակ առ ժամանակ պետք է անհամաչափություն ծագի յերկուսի միջև»:

Այլևս յերբ սկսվեց վերջին ճգնաժամը, սոցիալ-դեմոկրատները գրում էին. «1928 թվականը կազմակերպված կապիտալիզմի հզոր զարգացման թվականն էր: 1929 թվականին կապիտալիզմի նոր տարեթիվ սկսվեց: Նոր կապիտալիզմը հաղթահարում և վերացնում է այն ամենը, ինչ որ պայմանավորում էր կապիտալիստական տնտեսության անարխիան: Նոր կապիտալիզմը հաստատում է, որ համաչափհային տնտեսությունը կարող է տարվել նաև պլանային կարգով»:

Սրա հետ համեմատենք այժմ այն, ինչ որ գրում էր Մակդոնալդը անգլիական «Ֆորուորդ» լրագրի 1930 թվականի հոկտեմբերի 8-ի համարում.

«Վոչ յես և վոչ իմ պաշտոնակիցները, վոչ էլ բանվորական կառավարությունն է նատած այժմ մեղադրյալների աթոռի վրա: Մեղադրյալը կապիտալիստական հասարակարգն է, որ խորտակման է յենթարկվել Անգլիայում, Յեվրոպայում, Ամերիկայում: Այդ հասարակակարգը խորտակման յենթարկվեց այն պատճառով, որովհետև այդ անխուսափելի յեր..... Միայն, մեկ միջոց կա մարդկությանը փրկելու և աղատելու և այդ միջոցը սոցիալիզմն է».....

Իսկ այս Նաֆտալին ինքը, որը գրում էր, թե այժմ գործը լավ է գնում, թե կազմակերպված կապիտալիզմը կարող է վերացնել բոլոր ճգնաժամերը, ստիպված էր 1930 թվականի դեկտեմբերին հաստատել.

«Կապիտալիզմը անանկ դուրս յեկավ նույնիսկ իր ժամանակակից ձևի մեջ.... Կազմակերպված կապիտալիզմը նույնպես անկարող յեղավ կապիտալիստական հասարակակարգին հատուկ ճգնաժամերի առաջն առնել: Աննախընթաց թափով և արագությամբ հայտնի համաչխարհային տնտեսական ճգնաժամը պատասխանն է հանդիսանում կապիտալիզմի տիրանական ջանքերին կապիտալիստական միջոցների ոգնությամբ վերջ տալու ճգնաժամերին: Կապիտալիզմը վերջնականապես վար դրեց խաղաթուղթը: («Արբայտեր ցայտունդ» 1930 թ. դեկտեմբերի 25):

Իսկ ի՞նչ են առաջարկում նրանք:—Վոչինչ: Նրանք վոչ մի յելք չունեն: Նրանք ստիպված են պաշտպանել ամեն տեսակի բուրժուական ծրագրեր, որովհետև վոչ մի սեփական ծրագիր այլևս չմնաց:

Այդ կողմից չատ հետաքրքրական է մենշևիկ—Լև Դավիթովիչ Տրոցկու բռնած դիրքը, որը մինչև այժմ էլ դեռ փորձում է կոմունիստի դիմակ կրել: Նա վերջերս ինտերվյու ի տվել «Մանչեստրը Գարդիան» լրագրին: Այդ ինտերվյուի մեջ նա խոստովանում է, նախ՝ որ հնդամյա պլանը անանկ դուրս չեկավ (իսկ նա անանկությունն էր նախագուշակել նրա համար): «Այդ բանն ապացուցված է այն ջանքերով, որ գործադրում են դարձնելու այն քառամյա պլան»: Բայց վաղուց չէ, որ ասում էր թե դա ամենադուստ ցնորք է և արկածախնդրություն:

Ճիշտ է, նա այժմ էլ դեռ կրկնում է նույնը. «Յես անձնապես դիտում եմ այդ փորձը, որպես վաղաժամ և չմտածված: Սակայն արդեն այն փաստը, որ հարյուրավոր խորհրդային տնտեսագետներ, ինժենիրներ, դիրեկտորներ և ադմինիստրատիվ գործիչներ

ՊՍՏ. ՍԻՍՏՈՏԵԿԱ
15687-57

յենթադրում են (տեսնում ենք, ինչպես «Նրբամտորեն» է արտահայտվում Տրոցկին,—մենք միայն «յենթադրում ենք»—այլ վոչ թե այն, վոր մենք ամեն ժամ, ամեն որ միլիոնավոր մասսաների ոգնությամբ և աջակցությամբ իրագործում ենք այդ, այլ միայն յենթադրում ենք) այդ մասին, ժամկետների նման կրճատման մասին, ապացուցում է, վոր պլանը հեռու չէ խորտակումից, ինչպես վոր հայտարարել են դիտողները Փարիզից, Լոնդոնից, Նյու-Յորքից (պետք է նաև ավելացնել՝ ինքը Տրոցկին Պրինկիպոյի վրա գանվող առանձնարանից:)

Ապա նա ապացուցում է, վոր «այժմյան ժողովրդական տնտեսությունը ամենևին չի հանդիսանում սոցիալիզմի ֆազայի-փուլի —մեջը մուտք գործած տնտեսություն»: Նա վճռապես առարկում է դրա դեմ և ասում՝ վոր իբր, մի առանձին անցողական ստադիա չկա, վորի մեջը առատ հակասություններ կան թաղնված և կարող է լուրջ ճգնաժամերի հասցնել և այլն: «Սակայն,—ասում է նա, —վերադառնալով մեր հարցերին, թե հնգամյա պլանը կիրագործվի՞ արդյոք, անհրաժեշտ է ճիշտ կերպով վորոշել, թե ի՞նչ է նշանակում «իրագործում»: Չի՞ կարող խոսք լինել սպորտային ռեկորդների մասին: Ցեսս հնգամյա պլանը հասկանում եմ, վորպես բանվորական մի հիպոտեզ, վորը կիրառվում է, վորպես մի հրամայական վորձի ուրվագիծ, վորի հետևանքները վոչ մի դեպքում չեն կարող զուգադիպել յենթադրություններին: Փոխադարձ համապատասխանումները, վորոնք պարտադիր են տնտեսության դանազան ճյուղավորումների միջև, չեն կարող ճշտորեն սահմանվել մի քանի տարիների համար: Բանվորական հիպոտեզին վերաբերող ուղղումները՝ նրա մասերը հավասարակշռելու նպատակով, կարող են մտցվել նույն ինքնաշխատանքի ժամանակ: Սակայն, յես մնում եմ այն կարծիքին, վոր բնական կարևոր ուղղումներով և փոփոխություններով հանդերձ, այսպես կոչված, հնգամյա պլանն իրագործելի է»:

Այժմ միանգամայն պարզ է, վոր այդ բանը «վորձ»—«եքսպերիմենտ»—չէ, ավանտյուրա չէ, մեկ խոսքով այն չէ, ինչ ասում էր հնգամյակի մասին Տրոցկին, յերդակցելով բուրժուազիային:

Բայց ի՞նչ է առաջարկում Տրոցկին: Նա բավական հետաքրքրական պլան է առաջարկում կապիտալիզմի, կապիտալիստական հասարակարգի փրկության համար: Շարունակելով ապացուցել, վոր մեր տեմպերը սպորտային պրոբլեմ են, նա ասում է.

«Ցեսս վճռապես դեմ եմ դուրս գալիս բյուրոկրատական մաքսիմալիզմին, վորը վտանգի է յենթարկում աղքատացված արդյունաբերության լայն վերելքը: Վերջին տարիների ընթացքում յես նույնպես մի քանի անգամ նախազգուշացրել եմ բյուրոկրատական վազքի դեմ գյուղատնտեսության կոլեկտիվացման բնագավառում: .....Ցեսս նույնպես ամբողջությամբ ճիշտ չեմ համարում և նույնիսկ պաշտոնական չրջանների հեղինակության համար վտանգավոր եմ համարում նրանց այդորինակ տակտիկան, վոր իբր թե այժմ՝ հնգամյակի յերրորդ տարում, Ռուսաստանն արդեն թեվակոխեց սոցիալիզմի մեջ»: Ցեվ նա կապիտալիզմի փրկության համար այսպիսի պլան է առաջարկում: «Ցենթադրենք մի բոպե,—ասում է նա,—միայն ապացուցումների նպատակով, վոր բրիտանական կառավարությունը ԽՍՀՄ կառավարության հետ միասին նստած է մի կլոր սեղանի շուրջը մի ամբողջ շարք տարիների համար տնտեսական աշխատակցության պլան մշակելու նպատակով: Ցենթադրենք վոր այդ պլանը ընդգրկում է յերկու յերկրների ժողովրդական տնտեսության նշանավոր ճյուղերի մեծամասնությունը և՝ հակառակ կլոր սեղանի մի շարք ուրիշ կոնֆերանսների, այն հետևանքն է ունենում, վոր միանգամայն կոնկրետ փոխադարձ համաձայնություն է կայանում ալքան տրակտորների, էլեկտրական միավորների, տեքստիլի մեքենաների շուրջը և այլն: Անգլիան պետք է ստանար համապատասխան քանակությամբ հացահատիկ, վայր, գուցե նաև, ավելի ուշ բամբակ,—բոլորն էլ ի հարկե համաշխարհային շուկայի գներով: Ցեթե այդ պլանը փոքրից սկսվի, նա շուտ տված կոնուսի ձևով զարգանալու ձգտում կունենա, տարեցտարի ընդարձակվելով և ընդգրկելով հետզհետե ձեռնարկումների ավելի մեծ թիվ»:

Մեկ խոսքով, վերջնական հաշվով, յերկու յերկրների տնտեսության բոլոր ամենակարևոր ճյուղերը աճելով կկցվեն իրար հետ, «ինչպես զանդի վոսկոները»:

Ցեսս չգիտեմ, թե Լեվ Դավիթովիչի զանդի վո՞ր վոսկորներն են կցվել նրանց հետ, վորոնք նստած են այժմ Անգլիայում կլոր սեղանի շուրջը: Բայց յեթե խորհրդածության յենթարկենք այդ միտքը մինչև վերջը, այդ ի՞նչ է նշանակում:

Տրոցկին իր պլանն առաջարկում է վոչ թե իրրև ժամանակավոր միջոց, վոչ թե նրա համար, վորպեսզի ոգնի մեր յերկրի սոցիալիստական շինարարությանը, այլ նրա համար, վորպեսզի

կապիտալիզմը ճգնաժամից դուրս գալու վորևե յելք ունենա. նա ուզում է կապիտալիստական յերկրները, կապիտալիստական տընտեսությունները փրկել ճգնաժամից: Ահա թե մինչև ո՛ւր է հասել մենշևիկ Տրոցկին:

Այս պլանն այնուամենայնիվ կասակցված պլան է. մյուս սոցիալ-դեմոկրատները նույնիսկ այդպիսի աղքատիկ պլան էլ չունեն:

***

Այդպես է այն դրությունը, վորից մենք պետք է յելնենք, յերբ մոտենում ենք մեր հակակրոնական պրոպագանդայի հարցերին:

Ինչպես հայտնի է, մենք մի ժամանակ մի անասամբական միության մեջն եյինք սոցիալ-դեմոկրատիայի հետ միասին. պրոլետարական հեղափոխությունից հետո, մի քանի տարիների ընթացքում մենք վորձում եյինք աշխատակցել սոցիալ-դեմոկրատներին այն նպատակով, վորպեսզի տիրենք այն մասսաներին, վորոնք մտնում են այդ միության—պրոլետարական ազատականների Ինտերնացիոնալի մեջ («Internationale proletarischen Freidenker»):

Ինչի՞ հանգավ այդ աշխատակցությունը:

Նա՝ ամենից առաջ վոչ միայն մեզ, այլ և լայն մասսաներին համոզեց այն բանում, վոր սոցիալ-դեմոկրատները հակակրոնական անասամբական ընկերություններ են կազմակերպում վոչ թե նրա համար, վորպեսզի իսկապես աթեիստական պրոպագանդա մղեն, այլ նրա համար, վորպեսզի պայքարեն իսկական մարտնչող աթեիզմի դեմ, բանվոր դասակարգի մատերիալիստական աթեիզմի դեմ և պրոլետարական մասսաների այդ մարտնչող աթեիզմը նենգափոխեն բուրժուական ազատախոհությամբ սքողված լիբերալ դեմոկրատական տերտերականությամբ:

Այդ տիպի բուրժուական ազատախոհները, վորոնք վորձում են իրենց հեղեմոնիային յենթարկել բանվոր դասակարգի աթեիստական շարժումը, ջանք են թափում տարացի իմաստով բացատրել մարտնչող աթեիզմի այդ գործիքը, իսկ բանվոր դասակարգից պայքարի այդ գործիքը, սոցիալ-դեմոկրատիայի—պարոնայք Սիվերսների, Հարավիզների և նրանց նմանների բնական դաշնակիցներն են հանդիսանում:

Ձե՞ վոր սուր տարաձայնություններ առաջ յեկան մեր և նրանց միջև հենց այն բանում, վոր նրանք մեզնից ծածուկ սկսեցին պատմանավորվել Բելգիայի բուրժուական ազատախոհների Միության հետ, փորձում եյին կապեր հաստատել մյուս յերկրների բուրժուական կազմակերպությունների հետ և դարձնել Միությունն ինչպես նրանք եյին անվանում, ՊԱԻ—պրոլետարական ազատախոհների Ինտերնացիոնալ,—պարզապես բարի լիբերալների բուրժուաների ինտերնացիոնալ:

Սոցիալ-դեմոկրատների համար ՊԱԻ միայն դեմակավորումն է:

Մենք գիտենք, վոր սոցիալ-դեմոկրատները, իրենց տիրապետության ժամանակ Գերմանիայում, կոնկորդատ—դաշնադրություն—կնքեցին պապի հետ, վոր նրանք հոգևորականությանն ահագին ազդեցություն վերապահեցին դպրոցում: Բանն այնտեղ հասավ, վոր սոցիալ-դեմոկրատները մի լրագիր են հրատարակում, վորը կոչվում է... «Կարմիր Կաթոլիկ»: Այդ միևնույն բանն է, յեթե մենք սկսեինք մի լրագիր հրատարակել «Կարմիր կուլակ» կամ «Կարմիր բուրժույ» անունով» (ծիծաղ):

Գերմանական սոցիալ-դեմոկրատների մեջ կան հավատացյալ սոցիալ – դեմոկրատների հատուկ խմբակներ: Եվ չիոսելով արդեն այն մասին, վոր դրանով սոցիալ-դեմոկրատիան ուղղակի բացեիբաց փորձում է սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամներին ներգրավելու կրոնական կազմակերպության մեջ, մենք տեսնում ենք այստեղ, վոր սոցիալ-դեմոկրատիան ուղղակի դաշնակցում և պապականության, յեկեղեցու հետ:

Այսպիսով, հարկ չկա խոսելու այն մասին, թե սոցիալ-դեմոկրատները կարող են վորևե լուրջ հակակրոնական աշխատանք տանել: Ահա թե ինչու մենք պետք է քննության առնենք մեր աշխատանքի խնդիրները, ի նկատի ունենալով նաև մարտնչող աթեիստների այդ մեծ աշխատանքը միջազգային մասշտաբով:

Պետք է ի նկատի ունենալ, վոր մարտնչող անասամբականների մեր Միությունն իր քանակով ամենամեծ միությունն է հանդիսանում: Նրա անդամների թիվն այժմ 3½ միլիոնից ավելի է: Նա ամենախոշոր միությունն է հանդիսանում նաև իր ձեռք բերած արդյունքներով: Ցավ, իհարկե, մեր աշխատանքի բոլոր թերությունները, այն փաստի առկայությամբը միասին, վոր մենք լավ գրականությունից աղքատ ենք և այլն, այնուամենայնիվ այդ կողմից մենք ավելի բան ունենք, քան վորևե մի ուրիշ հակակրոնական կազմակերպություն:

Պետք է ընկատի ունենալ, որ մենք ստիպված ենք վճռական պայքար մղել սոցիալ-դեմոկրատիայի դեմ այդ ճակատում, որովհետև մենք արդեն սոցիալ-դեմոկրատների մի ամբողջ շարք յեղուլթիները գիտենք, որոնցով նրանք աշխարհ համերաշխության են յեկել պապի հետ:

Որինակ, «խաչակրաց արշավանքի» պապական կամպանիայի ժամանակ հայտնի մենշևիկ Դաբինը «Սոցիալիստիչեսկիյ Վեստնիկում» գրում եր, որ սոցիալ-դեմոկրատները մեծ մասով անաստվածներ են, բայց հենց այդ պատճառով էլ նրանք «պարտք են համարում վճռական բողոքի ուժգին ձայնը բարձրացնել այն հարձակումների դեմ, որոնց յենթարկվում են այժմ բոլոր կրոնների յեկեղեցիները Ռուսաստանում»:

«Հենց այն պատճառով,—գրում է Դաբինը, որ մեզ համար սատար են ամեն մի կրոնականություն և յեկեղեցականություն, մենք կոչ ենք անում Ռուսաստանի և Յեվրոպայի բոլոր հեղափոխական սոցիալիստական տարրերին, այն ամենին, ինչ որ ազնիվ և առաջադիմական է (որ՞նց չէ, կարծես այնտեղ դեռ «ազնիվ և առաջադիմական» բան է մնացել, այդ ծանվող քաղաքական պառնիկների սոցիալ-ֆաշիստական բանդայում), որպեսզի խարանեն կրոնի դեմ Կոնցլագերների և Սոլովկովների ոգնությամբ տարվող պայքարը: Մի պայքարի, որ ընդունակ է միայն կրոնական զգացմունքների նոր վերելքի և նոր բունկման արդյունքին հասցնելու»:

Բոլոր յերանգների ապիտակ գվարդիականները, կապիտալիստական խոշոր յերկրների ինտերվենտներն իրավունք ունեն պարգևատրելու «Սոցիալիստական Վեստնիկին» հակախորհրդային «խաչակրաց արշավանքի» այդպիսի արդարացման համար:

Մի ուրիշ նման «սոցիալիստ»—Դարվին—գրում եր, որ «բայլշևիզմը վոչ մի բարոյական իրավունք չունի դեն շպրտելու պապի բողոքը, որ ուղղված է կրոնը տերորի յենթարկելու դեմ»:

Նրանից հետո, ինչ որ մենք այժմ խմացանք մենշևիկ-ինտերվենցիոնիստների ուղղակի կապի մասին Ռոմզինի և ուրիշների հետ, այն մասին, որ նրանք նրանց հետ միասին, իմպերիալիստների կամպանիայի հետ, ինտերվենցիա եյին նախապատրաստում, մեզ այլևս վոչ մի բան չի զարմացնում: Սակայն, մենք պետք է այդ թշնամուն բոլորովին պարզ տեսնենք:

Իսկ ի՞նչ է կատարվում մեր յերկրի ներսում: Վոչ մի տարա-

կույս չկա, որ յեկեղեցու և աղանդավորական կազմակերպությունների հակահեղափոխական աշխատանքը ԽՍՀՄ-ում կապված է պապի, սոցիալ-դեմոկրատների և ամբողջ համաշխարհային բուրժուազիայի հակահեղափոխական աշխատանքի հետ: Մենք յեկեղեցականների հակահեղափոխական դավադրություններ ունենանք: Բավական է հիշել ուկրայնական ավտոքեֆալ—ինքնագլուխ—յեկեղեցու պրոցեսը, որի գլուխն եր կանգնած տերտերական ֆարաջա հագած մի սոցիալ-դեմոկրատ:

Վերջերս մենք մերկացրինք ֆեոդորովցիների կազմակերպությունը: Ֆեոդորովցիների պրոցեսը բաց արեց, որ այդ կազմակերպությունն ստեղծել եյին կուլակները, Դոնի ապիտակ բանդիտների մնացորդները: Նա առանձնապես տարածված է յեղել Ուկրաինայում: Ֆեոդորովցիները 1930 թվականի դարձանն ուղղակի սպառնում եյին կոլտնտեսություններին. «Դուք ցանում եք, իսկ մենք կհնձենք», «ամենամոտիկ պատերազմում մենք վոչնչացնելու յենք բոլոր բայշևիկներին» և այլն:

Մենք վերջերս ունեցանք իմյասլավցիների պրոցեսը: Այդ հակահեղափոխական կազմակերպության կազմակերպիչները—Գրիգորովիչը, Յակովլևը, Բուտենկոն ցարական բանակի գնդապետներ եյին: Այդտեղ է և՝ Մակարովսկին—Տուապսեյի նախկին քաղաքագլուխը և «Ռուս ժողովրդի միության» նախագահը, այդտեղ է և՝ Տիմոշենկոն—հին Սֆոնի կրոնավորը և հակահեղափոխական ուրիշ վանականներ: Ի՞նչ է նրանց ծրագիրը: Պայքարել Խորհրդային իշխանության դեմ: Կազմակերպության մեջ մտնող ամեն մի նոր անդամից պահանջում եյին յերդում տալ պայքարելու Խորհրդային իշխանության դեմ, չծառայել Կարմիր բանակում, չծառայել Խորհրդային իշխանության վոչ մի պաշտոնով, չմտնել դյուղացիական փոխադարձ ոգնության կոմիտեների մեջ, կոոպերացիայի մեջը չմտնել և կոոպերատիվ անդամության դրքույրը ձեռքը չվերցնել, չսովորել և չսովորեցնել յերեխաներին խորհրդային դպրոցներում, խորհրդային ժամանակության ոգնությունը չընդունել, խրճիթ-ընթերցարանները չհաճախել, չբաժանորդագրվել խորհրդային մամուլին և չկարդալ, հարկերը չվճարել, ոգնել Խորհրդային իշխանության վերնանին և տանել հարձակումները, որոնք հետևի սպիտակների գալու ժամանակ նրանք կվարձատրվեն:

«Ծածուկ բան չկա, որ ի հայտ չգա»:

Իմ սասլավցիները, Ֆեոդորովցիները մերկացված են,—մենք բաց արինք մեր դասակարգային թշնամիների պլանները: Ցեկ մենք դարձյալ ու դարձյալ համոզվեցինք, վոր մենք՝ ի դեմս յեկեղեցու, իսկական հակահեղափոխական կազմակերպություն ենք տեսնում:

Վերջերքս մեզ մի գրքույկ եյին ուղարկել դեղին շապիկով: Դա իսկական դեղին գրականություն է. վատ չի տպված, պարզ գարվածքով, բավական լավ տառերով և ուղարկված է հատկապես ԽՍՀՄ մարդկանց անատոմածների Միության: Այդ գրքույկը տարածված է Անդրկովկասում: Այդ մի շատ հետաքրքրական գրականություն է: Ահա մի քանի քաղվածք գրքից.

«Զարության վոգին դուրս յեկավ անդունդի խավարից, վորպեսզի մի միլիոնավոր մարդկանց ծունկի բերի իր վոտքերի առաջ:

Փորձության ժամը խփեց:

Արքուն կացեք, հաստատուն կացեք և Թանգագին պատկը, վոր պատում է ձեզ, մի՛ փոխանակեք չնչին գանգուլակների հետ:

Այդ վոչինչ, վոր սոսկալիորեն վոռնում են հողմերը և կատաղում տարերքը:

Քրիստոնյան կորցնելու բան չունի, բացի յերկրավոր չղթաներից, իսկ ձեռք կբերի հավիտենական կյանք»:

Այնտեղ տրվում են նույնպես այս տեսակի լոզունգներ. «Դուք դեռ մինչև արյուն Թափելը չեք ճակատամարտել»... «Ապանողը Թող մտածի, վոր դրանով ստեղծուն և ծառայում»:

Բացի դրանից, հատուկ լոզունգ կա սոցիալիզմի և կոմունիզմի մասին: «Պայքարը սոցիալիզմի համար նոր ոդակն է մարդասեցության չղթայում: Կոմունիզմի կանգնած ճահիճը նրա չինարարների մեջ չի հառաջ բերում՝ վո՛չ խանդավառություն, վոչ ուրախություն: Նրանց արյունարբու բնազդները լոկ նոր ցնցումների յեն ծարավ: Կոմունիզմի քաղաքական բարեկեցությունը, վորը մարդկանց յերկրին և բևեռում, անատոմածության դլխավոր որենքն է: Սակայն, նա անկարող է ոգանել մատրոսները վերինի մասին»:

Ինչպես տեսնում եք, հակահեղափոխական տեսակետից, վատ կազմված դերք չե. ընդ ամին՝ նա իրը թե ուղղված է պաշտոնական յեկեղեցու դեմ, տերերականության դեմ: Այստեղ յերևան գալիս հարմարվելը նոր ընթերցողին, վորին պաշտոնական տերերականությունը չի գոհացնում: Պետք է մատուցային պատկանող այդ մարդուն մի ուրիշ բան տալ և ահա նրան մատուցանում են

գեղեցիկ հակահեղափոխական տերերական պրոպագանդա: Պետք է ասել, վոր տերերականության պրոպագանդան այժմ ավելի կատարելագործված ձևով է տարվում, քան առաջ: Այս բանը պետք է նկատի ունենալ:

Վերցնենք, որինակ, «Նամակները յերկնքից»: Այդ բանը մինչև այժմ տերերական պրոպագանդայի շատ տարածված տեսակն է: Գյուղացին կամ բանվորը «յերկնքից նամակներ» է ստանում, որինակ, այսպիսի նմուշով.

«Թանգագին կոլտնտեսական-ընկերներ: (Մի ծաղ) Ցերկնային Թագավորությունից եմ ուղարկում յես ձեզ այս նամակը, վորի մեջ գրում եմ ձեզ դուրս դալ կոլտնտեսությունից և հարվածային աշխատանք հանձն առնել ձեր կոլտնտեսությունը քայքայելու համար: Ովքեր վոր այս անելիքը նպատակ չի դարձնի, նա ուղղակի զժոխք կգնա, իսկ ով կդարձնի, յես նրան սուրբ մարտիրոսների դասը կդասեմ և նա յերկնքի արքայություն կժառանգի»: Տեսնո՞ւմ եք. ասված ասվածի և ուղղակի նամակագրության մեջ մանել կոլտնտեսականների հետ:

Սովորաբար պահանջվում է, վոր տասը պատճեն պատրաստեն և տարածեն: Այդպիսի մի նամակ տարածվել եր ԿՍՄ (Կենտրոնական Սեահողային մարդի) Ռոստովանիկիյ շրջանում:

Ահա ուրիշ նամակներ յերկնքից.

«Յես ձեր տեր աստվածն եմ և ասում եմ ձեզ. հաստավ մտմենաց, յերբ ստատան խճճում և ժողովրդին իր ցանցերի—կոլտնտեսությունների մեջ: Նա՛, ով չի դայթակղվի կոլտնտեսություններով, կերկվի, իսկ բոլոր կոլտնտեսականներին յես կվոչնչացնեմ ամենամոտիկ որերում: Կվոչնչացնեմ նույնպես նրանց, ովքեր խաչ չեն կրի իրենց կրծքի վրա» (Դոնբասի Ռովենեցկիյ շրջան):

«Ի՞նչ քրիստո՞ս յեղբայրներ: Ցերուսաղեմ սուրբ քաղաքում լավել է քրիստոսի ձայնը—կորավ Ռուսաստան: Դեռաքրիստոսներ յերևացին յերկրի վրա, վորոնք բայլշևիկների մեջը մտան: Ժողովուրդը ստածուն չի հավատում: Պետք է ջերմեռանդորեն աղոթել Թողություն ստանալու մասին: Ով վոր դեռ ուզում է Թողության արժանանալ, պետք է տասնական որինակ տարածի տներում: Դատարկով տիրական այս առաջադրությունը, դու Թողություն կստանաս» (Միջ-Վոլգյան յերկիր՝ Նախկին Զերնիգովսկիյ, Ն.-Գլուշիցկիյ շրջան):

Այդ նամակը տարածվում եր «Ծառաղայթ» կոլտնտեսության շրջանում այն մոմենտում, յերբ այդ և հարևան կոլտնտեսության

հաջող աճման ժամանակ կազմակերպվում եր նոր, «Անապատի վարոս» միացյալ կոլտնտեսությունը:

Այդ տեսակի գրականություն շատ է տարածված: Նա տարածվում է փոստով, վորովհետև ուղարկվում է մասսայական նամակներով:

Ագիտացիան կոլտնտեսությունների դեմ ամենաբազմազան բնույթ է ընդունում: Որինակ՝ Ուլյանովսկիյ շրջանում շրջում եր գյուղերը՝ մի մարդ, վորն իրեն ասածու դեսպան եր համարում և ագիտացիա յեր անում կոլտնտեսությունների դեմ: Նա ասում եր, վոր աստվածն ուղարկեց իրեն, վոր Կիյևումն ինքը հրաման ստացավ դնալ և խոսել կոլտնտեսությունների դեմ, վոր մոռնում է աշխարհի վախճանը և համոզում եր գյուղացիներին կոլտնտեսություն չմտնել, վորովհետև կոլտնտեսությունները դեռաբրիստության գործ են:

ԿՍՄ Տուշենսկիյ շրջանի Կոսուլինո գյուղում տնտեսությունների 16,6% (241-ից 40-ը) կոլտնտեսության մեջն են մտած: Հավատացյալ մասի վրա մեծ ազդեցություն են գործում յեկեղեցական խորհրդի անդամները, վորոնք անհատականների մեջ այսպիսի լուրեր են տարածում. «ԵԼԹԵ կոլտնտեսություն մտնեք, ձեզ յեկեղեցի չեն թողնի, յեկեղեցին կփակեն» և այլն:

ԿՍՄ Կիրսանովսկիյ շրջանի Ցերկրորդ Ինոկովկա գյուղում հակահեղափոխական ագիտացիա յեր տանում վոմն «մայր Հեղինե»: Հեղինեն (Ցելենա) բժշկում եր հիվանդներին, ընդ սին նրանց, որինակ, այսպիսի պարմաններ եր դնում. «Դուրս գրվիր կոլտնտեսությունից, այն ժամանակ յես քեզ կբժշկեմ»: Խուզարկությունը Հեղինեյի տան մեջ վաթսուն մետր յերկայնություն ունեցող մի ատրիբկրյա անցք յերևան հանեց, վոր նրա տնից յեկեղեցին եր տանում: Անցքի յերկայնությամբ նավթի, պարքմատի (սուխարի), զանազան մթերքների, վոսկեղենի և այլն չորս պահեստ է գտնված: Այդ բոլորի համար պետք յեղավ յոթ սայլ:

Մոսկվայի մարդի Միլոսլավսկիյ շրջանի Մուրայեվո գյուղում մի սանդուխա մուրացկան սլամում եր, վոր ինքը կոլտնտեսության մեջն է յեղել. «Ամեն ինչ խլեցին մեզնից, բոլորին մուրացիկ դարձրին. իսկ մենք, 100 ընտանիք եյինք: Այդպես ել դուք,— յԵԹԵ տեր ասածուն կբարկացնեք և այդ սատանայական կոլտնտեսության մեջ կդրվեք, դուք ել մուրացկանի մախաղով կշրջեք»: Պարզվեց, վոր սանդուխաը հարևան յեկեղեցիներից մեկի տիրացուն է. յեկեղեցին այժմ զրկված է:

Մորդվայի ինքնավար մարդի Կոչկուրովսկի շրջանի Պիրմե գյուղում լուրեր տարածվեցին, թե մի վանական կուրսի Սարովսկի Սերաֆիմն է յերևացել և ասել. «Ով վոր կոլտնտեսություն մտնի, նրան «հրեղեն անձրևը» կթակի»:

Պայքարը միայն այդ ձևերով չի տարվում: Մենք սև տերրորի միանգամայն պարզ փաստեր ունենք, յեկեղեցու մասնակցությունը ամեն տեսակի դավադրությունների՝ ընդդեմ կոլտնտեսությունների, ընդդեմ չքավորների, ընդդեմ գյուղական ակտիվիստների: Այստեղ առանձնապես նկատելի յե, թե ինչպես տվյալ ետապում, յերբ պայքարը շատ սրվեց, հոգեվորականությունն իրոք զգալով, վոր մոտենում են իր վերջին տարիները, պայքարում է մեր դեմ իր բոլոր միջոցներով: Պայքարում են նրանք, վորոնք չեն ուզում դիջել, թեպետև բավական չատերն են դիջում. այսպես, մենք քահանաների մասսայական հրաժարումն (տառացիորեն՝ հագարը) ունենք իրենց փեշակից:

Սակայն, չի կարելի կարծել, վոր կրոնը ինքն իրեն կանհետանա: Նրանից, վոր պլանային տնտեսությունը կրոնի վոտքի տակի հողը դուրս կքաշի, նրանից՝ վոր շահագործող դասակարգի վերացումը դուրս կկորզի մասսային կրոնի ռեակցիոն ազդեցության տակից. նրանից, վոր այժմ անհետանում են տնտեսական և սոցիալական այն նախադրյալները, վորոնք կրոն եյին ստեղծում, զաչտպանում եյին կրոնական տրամադրությունները,—այս ամենից դեռ չի հետևում, վոր այդպես ել արագ կանհետանա կրոնական հավատալիքները:

Մենք լավ գիտենք, թե վորքան կենսունակ է անցյալի իդեոլոգիան, ինչպես նա ավելի յերկար է ապրում, քան նրան ծնող տնտեսական վորոշ հասարակակարգը:

Չի կարելի ձեռքերը ծալել և սպասել, թե կրոնն ինքն իրեն, «ինքնահոսով» կանհետանա, չի կարելի կարծել թե այստեղ առասպածներին անելու բան չկա:

Սակայն, դժբախտաբար, վոմանք՝ թե՛ մեր գիտական աշխատավորներից, թե՛ տեղերի հասարակական աշխատավորներից այդպիսի տեսակետ ունեն: Շատերը կարծում են, թե քանի վոր կրոնն անհետանում է և մասսաները հեռանում են կրոնից, ապա ուրեմն հակակրոնական պրոպագանդան պետք չէ:

Իսկ այն, վոր մասսաները հենց հակակրոնական պրոպագանդայի շնորհիվ են հեռանում, վոր հակակրոնական պրոպագանդան արագացնում է այդ պրոցեսը, հեշտացնում՝ նոր, մատերիալիս-

ական էվոլյուցիայի, մատերիալիստական աշխարհահայացքի մշակման պրոցեսը՝ միջնադարյան հնավուրց բորբոսնած էվոլյուցիայի փոխարեն,—այդ չատերը չեն հասկանում կամ մոռանում են։

Կրոնական կազմակերպություններն ուղղակի խոչընդոտ են հանդիսանում մեր սոցիալիստական շինարարության։ Եկեղեցու դրոշի տակ ուղղակի ագիտացիա, ուղղակի և թաքուն պայքար է մղվում կոլտնտեսությունների դեմ։ Կրոնական կազմակերպությունների գծով բայց աշխատանք է տարվում նաև կոլտնտեսությունները քայքայելու ուղղությամբ։ Մյուս կողմից՝ մեզնում յեկեղեցական տոների ընդարձակ տոնակատարություններ են տեղի ունենում. չնայելով մեր անընդհատին և հնգորյակին, մեզնում-այս տեսակի փաստեր կան, ինչպես Սվերդլովսկից ստացված հաղորդագրությունը, որինակ, Սուխոյսկիի անտառարդանտեսության վերաբերմամբ, վորտեղ տեղական յեկեղեցու տոնին փայտահատների 1/3 մասը հեռացել է. միայն Շորինսկիյ անտառամասից 300 փայտահատ է հեռացել, այդ պատճառով էլ փայտ կարելն ու կրելը դադարել է։

Նիժեգորոդսկիյ յերկրի Բալախնա և Բելոզերս գյուղերում «Նիկոլի» յեռորյա տոնին 6 հազար ռուբլի յե վատնվել, այսինքն՝ մի գումար, վոր յերկու անգամից ավելի յե այն գումարից, վորը վճարվել է սոցապահովագրության համար։

Լենինգրադի մարզում ամբողջ շրջակայքի փայտահատ-ուսյալները յերեք որ «մկրտություն» եյին տոնում, ձի հեծած՝ գրոսանք կատարում, խմում և խուլիգանություն եյին անում։ Փայտամթերումները մինիմումի իջան։ Անտառում 500 փայտահատից և վոչ մեկը չեր աշխատում։ 4000 խորմեար փայտ պակաս է մշակվել, 6000 խորմեար փայտ պակաս է գուրս կրվել։ Առանձին պրոդուլիների և աշկարա սիմուլյանությունների մեջ նկատվել են աղանդավոր-հնածիսյանները։ Նարոնովսկիյ անտառամասում մի գեկադին 1–2 հազար խորմեար մշակելու փոխարեն հնահավատները մշակեցին միայն 25 խորմեար։

Մոսկվայի մարզի Զաղորսկիյ շրջանի չորս գյուղում 350 ընտանություն «Նիկոլի» տոնի յերեք որվա ընթացքում խմելու և գրոսանքների վրա վատնել են 13·700 ռուբլի (ՄՏԿ 9 տրակտորով)։

Շաղրինսկիյ շրջանում «Սարբատիայի» «աթեոական» տոնին գյուղացիությունը կրոնի և ոգու վրա ծախսել է 3400 ռուբլի։

Իվանովսկիյ մարզի, Յերմոլովսկիյ շրջանի Դերկի գյուղում «Կոդմա-Դեմյանի» տոնին 540 ռուբլի խմիչքի յե տրված։ Իվանովսկիյ մարզի Մելենկովսկիյ շրջանի Գրոսսենիցկիյ գյուղխորհրդի գյուղերի գյուղացիները «Կազանսկու»—(Կազանի մայր աստվածածնի—տոնին (4/XII—8–XII) խմելու վրա ծախսել են 50·000 ռուբլի։

Շինմիության բորոտվիկական գործարաններում (Լենինգրադի մարդ) «Նիկոլի» տոնի յերեք որվա ընթացքում միայն 600 մարդ—որ պրոդուլ է յեղել, արտադրանքը 11·000 տոննով պակաս է արվել։

ԿՍՍ Բելգորոդ շրջանի Գոստիշչևսկիյ գյուղխորհրդում վարի ազգաբնակչությունը 40 տոկ. կոլեկտիվացած է, «Միխայլի» աթեոական տոնը տոնում եր յերեք որ։ 25 դուլ խմիչք է խմվել։ Գյուղխորհրդի սահմաններում միայն 680 ռուբլու «Հընգամյակը 4 տարում» փոխառության պարտատոմս է տարածվել՝ 3·100 ռուբ. կոնտրոլ թվի հանդեպ։

«Բեժեցկիյ ռաբոչիյ» լրագիրը (Արևմտ. մարդ 24/XII) կրոնական-հարբեցողական պրոդուլների հաշվարկն է կատարում։ 1929/30 թվականի նոյեմբերի—հունվարի 11 դիրակի որերի ընթացքում «Կրասնայ Պրոֆինտերն» գործարանն ավելի քան 1 և կես հազար մարդ—որ կորցրեց ինքնակամ պրոդուլների պատճառով, իսկ դրամի վերածելով—22·704 ռուբլի կամ 2·243 դրթան։ 1929–30 թվականի «ծննդյան» 7 որվա ընթացքում պրոդուլ անողները գործարանին 25·000 ռուբլու վնաս հասցրին։ Կրոնական տոների պրոդուլների ոչնչացման ուժեղացման հետևանքով Արևմտյան մարզի Սուխինիչի Դարբուժսկիյ կոմբինատի արդիլնալանը թերակատարվում է։

Սակայն, գործարկոմի նախագահը հետևյալն է ասում հակակրոնական աշխատանքի մասին. «Այդ աշխատանքն առանձնապես կարեվոր չէ։ Առանց դրան էլ շատ գործ կա անելու»։

Մոսկվայի մարդի գրեթե ամբողջ Կավերինո գյուղը յոթ որ հարբեցողությամբ եր զբաղվում «Նիկոլի» տոնի առթիվ։ Միքանի խոշոր կոխվներ են տեղի ունեցել։ 10·000 ռուբլուց ավելի խմիչքի յե տրվել, իսկ գյուղի գլուխն ամբողջապես ճեղքված քների մեջ է գտնվում, վառարանները քանդվել են և ծուխ են անում։

Եկեղեցու և յեկեղեցականների ակտիվ գործունեության այս բոլոր փաստերը,—իսկ նրանց կարելի յե հազարներով հաշվել,—ստիպում են մեզ շատ ուշադիր կերպով վերաբերվել հակակրոնական պրոպագանդային։ Հակակրոնական պրոպագանդայի մեջ

մենք մեծ հաջողություններ ունենք, բայց դեռ շատ աշխատանք կա անելու։ Մենք մեր պայմաններում կրոնի դեմ պայքար մղելը դիտում ենք որպես սոցիալիզմի համար մղվող պայքարի մասերից մեկը, որպես պայքար ինտերնացիոնալ դաստիարակության համար, որպես պայքար ամեն տեսակի աղդայնական և ցեղային նախապաշարմունքների դեմ, ամեն տեսակի շովինիզմի դեմ, պայքար մասսաների իրավաղուրկ, նվաստ կացության դեմ։ Մենք չենք անջատել և չպետք է անջատենք հակակրոնական պրոպագանդան դասակարդային պայքարի խնդիրներից։ Նույնիսկ Արևմտյան Ցեվրոպայում հակակրոնական պրոպագանդայի խնդիրը միևնույն դասակարդային հատվածի մեջն է դրված. դա հաճախ այն ասելիքներից մեկն է, որի միջոցով կոմունիզմին դեռ անծանոթ մասսան ավելի յե մոտենում մեր կուսակցության խնդիրներին։

Ինչպե՞ս ենք պատասխանում մենք դեռ մինչև այժմ ծավալվող կրոնական պրոպագանդային։

Հակակրոնական պրոպագանդան մեր պայմաններում պայքար է սոցիալիստական շինարարության վորակի, տեմպերի համար, հարվածայնության համար, սոցմրցման համար։ Մենք արդեն մի քանի տարի գոյություն ունեցող անաստված գյուղեր, անաստված կոմունաներ ունենք։ Այդ գյուղերից մի քանիսը էլեքտրիֆիկացիայի յենթարկված, մեքենա-տրակտորային կայաններ, մեքենա-տրակտորային պարկ ունեցող որինակելի կոլեկտիվ տնտեսություններ են հանդիսանում, որոնք հակակրոնական ազդեցություն են գործում շրջակա գյուղերի ու շրջանների վրա։

Տերտերների և կրոնի անհրաժեշտությունը վերացրած այդպիսի անաստված կոլտնտեսությունների թիվը վերջին ժամանակներս արագորեն աճում է։

Մի քանի ընկերներ նույնիսկ ասում են, թե մենք պետք է «կանենք մի տեսակ հնդամյա պլան մշակել այդպիսի անաստված գյուղեր ստեղծելու համար։ Ցակուտիայում, որինակ, միտք են հղացել ինչ վոր մի շրջանում ամբողջությամբ վերացնել կրոնը։ Մենք այդպիսի խնդիր դնել չենք կարող և, թվում է ինձ, թե չպետք է դնենք, որովհետև այդ մի տեսակ արհեստական, անկենսունակ, կարինետում թխած բան կլիներ,—այդ՝ անխուսափելիորեն կշաղկապվեր կուսգծի աղավաղումների հետ։

Չպետք է մոռանալ,—յես այս բանն առանձնապես չեշտում եմ,—վոր հենց այդ բնաղավառում ամեն մի փութկոտություն վնասակար է, վոր այստեղ պետք է խորացրած համբերատար, համառ աշխատանք։

Մեղնում կան «անաստված հեկտարներ» ցանելու շատ լայնորեն տարածված յերևույթներ։ «Անաստված հեկտար»—այդ մի վոքր տարորինակ է հնչում,—կոչվում են այն հատուկ հեկտարները, վորոնք ցանված են հակակրոնական աշխատանքն ամրացնելու համար, այնպիսի մի ամբողջ շարք խնդիրներ կատարելու համար, վորոնք հատուկ են մեր շարժման։ Անաստվածական բրիգադներ, ցեխեր, դործարաններ—դա դասակարգային պայքար է, վորը տարվում և հակակրոնական աշխատանքի դրոշակի տակ։ Հակակրոնական պրոպագանդայի այդպիսի ձևը մեր սոցիալիստական շինարարության դծով է ընթանում և՝ որդանապես կապված լինելով դասակարդային ամբողջ պայքարի հետ, ամբապնդում է պրոպագանդայով ձեռք բերված արդյունքները։

Մեր միության հսկայական աճում կա մեղնում։ ՄԱՄ 1926 թվականին ուներ 86·000 անդամ, 1927 թ.—138·000, 1928 թ.—123·000, 1929 թ.—465·000, 1930 թ.—մոտավորապես 2·000·000, 1930 թ. կեսերին—մոտավորապես 3·000·000, 1930 թ. առ 1-ն հոկտ.—մոտավորապես 3·500·000։ Այժմ այդ թիվն անհամեմատ ավելի մեծ է։

Մեղնում հակակրոնական դպրոցական հիմնարկների ցանցն աճում է։ Մենք ներկայումս ունենք 85 հակակրոնական համալսարան և հակակրոնական բաժանմունքներ՝ բանվորական համալսարաններին կից։

Սակայն, անաստվածության աճման այժմյան տեմպի ժամանակ այդ քանակը միանգամայն անբավարար է. պետք է ուշադրության առնել բանվորների ահագին ձգտումը, կոլտնտեսականների ահագին ձգտումն այժմ վորոշ դիտելիքներ ձեռք բերելու համար՝ այս բնաղավառում։ Մեր դեկուցումները—միշտ և ամենուրեք մակերեսային դեկուցումներ, վորոնք հիմնված չեն խնդրի ավելի խոր ուսումնասիրության վրա—այժմ արդեն չեն գոհացնում մասսաներին։ Իհարկե, մենք չպետք է կոմունիստական յուրատեսակ տերտերներ, փոխասացներ լինենք այդ խնդրում։ Անհրաժեշտ է, վորպեսզի մենք հրապարակ դանք վորպես այնպիսի մարդիկ, վորոնք հակակրոնական պրոպագանդան դիտում են միայն ինչպես դասակարգային դաստիարակության ձևերից մեկը, վորպես այդ դաստիարակության մեթոդներից մեկը։ Բայց դրա համար անհրաժեշտ է, վոր շատ ավելի ընդարձակ

կազբեր ունենանք բաղմակողմանի նախապատրաստություններ և, իհարկե, դրա համար կարևոր է ավելի սիստեմատիկ, քան մինչև այժմ յեղել է, համապատասխան մարքսիստական դրականության մատնված պլան, մեզ անհրաժեշտ է պարզորոշ իդեոլոգիական պայքար:

Մեզնում 44 հակակրոնական Թանգարան է բացված: Նրանցից մի քանիսը այժմ հսկայական նշանակություն ունեն: Մոսկվայի մեր կենտրոնական հակակրոնական Թանգարանը միայն վերջին տարվա ընթացքում այցելել են 263·000 մարդ, այսինքն՝ մեկ քառորդ միլիոնից ավելի: Այդ Թանգարանը մեր յերկրի ամենաշատ հոմախելի Թանգարաններից մեկն է: Հետաքրքրությունը դեպի նա անհագեն է: Կարևոր է այն, որ նշանակալից քանակությամբ հավատացյալներ են գնում այնտեղ. սկզբում նրանք հետաքրքրությունից են գնում և դուրս են գալիս այնտեղից յերբեմն Թքելով, ոտքայն կոտրածանքի մեծ բևեռը գլուխներում:

Այլևս վերցնենք մեր մամուլը: 1927 Թվականին հրատարակվել է վոչ-պարբերական դրականության 700·000 տպագրական Թերթ-ստոլիկ, 1929 Թվականին—34 միլիոն, 1930 Թվականին—50 միլիոն: Մեզնում այժմ այդ նեղ տեղ է, վորովհետև Թուղթ չկա: Մենք ստիպված ենք լրագրերը կրճատել: Մենք չենք կարող դրականության այնպիսի քանակություն բաց Թողնել, որ այժմ պահանջում են մասսաները: Այս կողմից անատոված դրականության անսովոր աճած պահանջից հետ ենք մնացել:

Մենք հրատարակում ենք «Բեդբոժնիկ» մեծ լրագիրը՝ 409 հազար տիրաժով և «Բեդբոժնիկ» հանդեսը, որ նույնպես մեծ տիրաժ ունի, «Անտիրելիգիոզնիկ» հանդեսը, որը 30·000 որինակով է տպվում և՝ վերջապես, «Վոյին տավոյուչչեյ աթեիզմ», փոքրի բաժանորդագրությունը միայն 2-րդ №-ի լույս տեսնելու մասնաբը արդեն 5000 անցավ[1]): Մեր ընկերներն Արևմտյան Եվրոպայում այժմ բավական խոշոր կազմակերպություններ ունեն—Ամերիկայում կա 130 հազար անդամ, Ֆրանսիայում—360 հազար, Չեխո-Սլովակիայում—80 հազար, Շվեյցարիայում նորից առաջ է յեկել պրոլետարական անատոված-ների «Der Gottlose» կազմակերպությունը:

[1]) Բացի դրանից ԽՍՀՄ հրատարակվում են՝ «Ցուն-ի Բեդոմնիկ» մանկական հակակրոնական շարժման հանդես. հակակրոնական հանդեսներ հայերեն, վրացերեն, գերմաներեն, ուկրաիներեն, նոր հրաներեն, լատիշերեն, ուզբեկերեն, Թաթարերեն, բուրյատերեն, բաշկիրերեն և ուրիշ լեզուներով:

Բելգիայում «Materialiste» կազմակերպությունը կա, Մեկսիկայում և ուրիշ մի շարք յերկրներում կան ընհատակյա կազմակերպություններ, վորոնք ունեն նաև իրենց պրոլետարական աթեիստական մամուլը:

Հակակրոնական աշխատանքը մասսաների մեջ այնպիսի հարցումներ հառաջ բերից, վորոնց վրա մենք չատ-չատ պետք է աշխատենք:

Պետք է մոռանալ, վոր կրոնական մարդուն կրոնը մի ամբողջ շարք հարցերին պատասխաններ եր տալիս կյանքում: Նա այժմ այդ պատասխանները վորոնում է մեզ մոտ: Նա ուզում է, վոր մենք իրեն պատասխան տանք, պրոլետարական տեսակետից կշռադատված՝ կայուն պատասխան:

Այդ բանի վրա պետք է չատ աշխատել:

Յերբեմն մեր փիլիսոփաները մոռանում են այն մասին, թե աշխատավորներին պետք է դիալեկտիկական-մատերիալիստական լրիվ աշխարհահայացք տալ:

Յեվ այս կողմից խոշոր հանցագործություն է մեր ամբողջ յերկրի առաջ, մեր ամբողջ շարժման հանդեպ այն, վոր «Մարքսիզմի գրոշի տակ» (Պոդ զնամենեմ մարքսիզմա) հանդեսը մոռացավ, վոր ինքը պետք է մարտնչող աթեիզմի որգանը լինի:

Ընկե՛ր Միտինը ճիշտ նշեց իր զեկուցման մեջ, թե հին փիլիսոփայական զեկավարությունից չեր կարելի սպասել, վորպեսզի նա իր ուշադրությունն այդ կողմի վրա բևեռեր:

Մանավանդ այժմս մենք պետք է սրենք մեր ուշադրությունն այդ խնդրի վրա: Մասսան մի ամբողջ շարք հարցեր է դնում, վորոնք շաղկապված են բնագիտության, կրոնի, մատերիալիստական ամբողջական աշխարհահայացքի մշակման հետ:

Յեվ մենք պետք է կարողանանք պատասխանել այդ հարցերին:

Մինչև այդ ճակատում մենք չափազանց հետամնաց ենք: Հակակրոնական պրոպագանդայի թերագնահատումը զերբոբինյան զարոցի մեղքերից մեկն եր: Այժմ, թվում է թե, թարմ հովիկ փչեց: Մենք սպասում ենք, վոր շրջադարձը փիլիսոփայական հակատում միայն դիալեկտիկա չի լինի, այլ մարտնչող մարքսիստ-դիալեկտիկների Ընկերության ամբողջ աշխատանքը կսկսի իրոք մատնել մարտնչող անատոված-ների Միության աշխատանքին:

Փիլիսոփայական զեկավարությունը փոխելուց հետո ընկերներն զբաղվեցին այդ խնդրով:

Նույն այդ խնդիրները պետք է մշակվեն նաև մեզնում, «Մարտնչող ալթեիստ» տնտեսական որդանում։

Բայց այդ քիչ է։

Մենք պահանջում ենք Մարքսիստ փիլիսոփաներից ամենամանրամասն մատնանշումներ մեր հակակրոնական պրոպագանդային։ Մենք պետք է վճռապես պայքարենք դերբիականության մնացորդների դեմ, ինչպես և հակակրոնական շարժման թերագնահատման դեմ։

Մենք չպետք է մոռանանք, որ այդ ճակատում մեզնում, ինչպես և ընդհանրապես փիլիսոփայական ճակատում, գլխավոր վրտանգը մեխանիստներն են հանդիսանում։

Այստեղ յես պետք է դատնամ հին վեճին, որը մեկուկես տարի հառաջ ծագեց։

Հարցն այսպես եր դրվել, թե մենք չենք կարող աշխատակցել մեխանիստների հետ հակակրոնական աշխատանքում։ Դերբիստների հետ ունեցած բանավեճում յես հենվում եյի Լենինի ցուցումների վրա, թե թշնամիների դեմ պայքարելու համար մենք կարող ենք նույնիսկ «դաշինք» կնքել բուրժուական մատերիալիստների հետ։ Ուստի մենք չենք կարող մեր հակակրոնական միությունից վտարել կուսակցության անդամ մեխանիստներին։ Բայց մենք պահանջում եյինք և պահանջում ենք նրանցից, որպեսզի նրանք իրենց մեխանիստական սխալները միության չեմքից դուրսը թողնեն։

Մենք թույլ չենք տա նրանց, որ իրենց մեխանիստական հայացքներն անցկացնեն հակակրոնական պրոպագանդայի մեջ։ Մենք պահանջում ենք, որպեսզի նրանք մեր հակակրոնական դրականության մեջ իրենց սխալների ապառիչ քննադատությունը տան։ Եթե մենք կուսակցության մեջ պահանջում ենք այն ընկերներից, որոնք կամենում են մեր համախոհները լինել, որպեսզի նրանք իրենց սխալների բացեիբաց քննադատությունը տան, որպեսզի նրանք հայտարարեն, որ իրենց պնդումները սխալ են,—նույն այդ բանն եվ մենք մեխանիստներից ենք պահանջում։ Ընկեր Թիմիրյազևն ու մյուսները ասում եյին, որ իրենք, մեխանիստները, ըստ եության պայքարում եյին միայն դերբիենյան դպրոցի դեմ, մատերիալիստական դիալեկտիկայի աղավաղման դեմ։ Ինչո՞ւ այժմ, յերբ կուսակցության ԿԿ և մեր փիլիսոփայական ամբողջ հասարակայնությունը հակահարված տվին այդ խմբին, փոխեցին դեկավարությունը և նոր ուղու վրա կանգնեցրին, ինչո՞ւ մենք նրանցից այնպիսի հայտարարություն չենք լսում, որ իրենք վոչ միայն դադարեցնում են պայքարն այդ ճակատում դիալեկտիկական մատերիալիզմի դեմ, այլև դրական աշխատանքի յեն լծվում մաքրելու այն՝ ամեն մի աղավաղումից, ի թիվս որոշ նաև մեխանիստական աղավաղումներից, որ իրենք քննադատելու յեն իրենց կատարած սխալները։

Այդ ճակատում մեզնում մտածողության յերկու սիստեմ չի կարող լինել, այստեղ եվ պետք է լիակատար պարզություն մտցնել։

Ուստի, մենք՝ իհարկե, թե՛ մեխանիստներին, թե՛ մենշեվիկություն անող իդեալիստներին անողոքաբար քննադատելու յենք։

Սակայն խնդրի վճռական դրույթից, որ մենք ընկերների առաջն ենք դնում այն մասին, որ նրանք պարտավոր են իրենց սխալները քննադատել, դեռ չի հետևում, որ մենք նրանց հայտարարում ենք. «Դուրս կորեք այստեղից, մենք ձեզ վոչ մի հակակրոնական աշխատանք չենք տալու»։

Կուսակցության ԿԿ պրակտիկայից որինակ բերեմ։ Կուսակցության ԿԿ այն հայտնի վորոշումն հանեց, որը քննադատում եր դրությունը փիլիսոփայական ճակատում,—վորոշումը «Պոդ զնամենյեմ մարքսիզմա» («Մարքսիզմի դրոշի տակ») հանդեսի մասին։

Շատ սուր քննադատություն է տրված։

Մի դրույթ, որ յերկու տարբեր մեկնություն չի հանդուրժում։

Սակայն, կազմակերպչորեն ինչպե՞ս ամրագրվեց ԿԿ վորոշումը։

«Մարքսիզմի դրոշի տակ» հանդեսում մենք գտնում ենք ընկեր Թիմիրյազևի անունը, որին մենք մինչև այժմ համարում եյինք և համարում ենք մեխանիստների դպրոցին պատկանող և ընկ. Դերբինի անունը, որի գիծը դատապարտված է։

Հետևաբար, կուսակցության ԿԿ գործն այսպես է դիտում. «Մենք դատապարտում ենք այդ գիծը, մենք ճիշտ չենք համարում այն, մենք պահանջում ենք ձեզնից վճռական ուղղում, մենք պահանջում ենք վճռական քննադատություն։ Սակայն, դրա հետ միասին մենք ձեզ ժամանակ ենք տալիս կուսակցության կողմից վճռապես դատապարտված հայացքները խորհրդածության առնելու»։

Կուսակցության ԿԿ—վճռող շտաբը—այդ հանդեսի խմբա-

դրության մեջը մացրեց այն ընկերներին, որոնց դատապարտեց։

Ապա ուրեմն, հարցն այնպես չի դրված, ինչպես պատկերացնում են մի քանի ընկերներ—քանի որ դու դեռ չես խոստովանել մինչև վերջը և չես քննադատել մինչև վերջը քո բոլոր սխալները, ապա ուրեմն դու ընդհանրապես տեղ չունես այս ճակատում։ Վո՛չ. մենք ընդունում ենք որ պետք է և՛լի մտածելու ժամանակ տալ այդ մարդկանց։ Մենք անողոքաբար քննադատում ենք նրանց անճիշտ հայացքները, մենք նրանց ուղղում ենք,—դրա համար է, որ մենք ղեկավարություն ենք համարում մեզ։

Եթե որ մեր ամբողջ ղեկավարության իմաստն այն լիներ, որ մենք, այսպես ասած, նպատակ դնեինք «բռնել ու կախել», այդ իսկապես շատ հեշտ բան կլիներ։ Ղեկավարության իմաստն այն է, որ մենք դաստիարակիչ մարդկանց, վերափոխիչ մարդկանց, որ նրանց սխալներն ուղղեմ։

Այս բանը շատ ավելի դժվար է, բայց դրան պետք է հասնենք, որովհետև մատերիալիստական ներդաշնակ աշխարհահայացքի մշակումը մոչ ամենքին է իսկույն տրվում։ Շատերն այդ բանին հասնում են մի շարք սասիճաններից հետո, մի շարք սխալներից հետո։ Սխալ կլիներ, եթե մենք ամեն մի սխալվողին հետ հրեյինք այն հիման վրա, որ նա մինչև վերջը չմտածեցավ մեզ, փոխանակ ողնելու նրան, որ մինչև վերջը մոտենա մեզ։

Գործը բերկու ճակատով մենք պետք է մղենք անհողդողդ կերպով, հետևողականորեն, վճռական ինքնաքննադատություն տանելով մեր շարքերում։ Հակակրոնական պրոպագանդայի դիծն ուղղելու տեսակետից՝ մենք պետք է վերանայենք մեր բոլոր հակակրոնական հրատարակությունները։ Մենք հսկայական դրական հանությունն ունենք, որինակ՝ «Աթեիստ» հրատարակչության հրատարակությամբ։ Պետք է ուղղակի ասել, որ «Աթեիստը»՝ ի թիվս մյուս արժեքավոր հրատարակությունների, լույս է ընծայել նաև իդեալիստական բովանդակություն ունեցող մի շարք գրքեր։ Այդ գրքերը պետք է ուշադրությամբ վերանայել, ուղղել յեղած սխալները նոր հրատարակությունների մեջ, մի շարք իդեալիստական կշռադատված կարծն ոժանդակ ձեռնարկներ մշակել հակակրոնական պրոպագանդային վերաբերող։

Այլևս, եթե մեր հակահարվածն է պահանջում աջ ոպորտունիստական այն դրությունը, որը դրություն ուներ հակակրոնական պրոպագանդայի բնագավառում և կապված եր մեխանիստական աշխարհահայացքի, մեխանիկական մոտեցման հետ, այդ դեպքում պետք է նույնպես վճռական հակահարված տալ այն դաղափարներին, որոնք մեզ «ձախից» են քննադատում, որովհետև նրանք անասելոր չափով վնասակար են հանդիսանում։ Մենք պետք է ամենասոր նավճռական կերպով դուրս գանք կրոնի ծագման իդեալիստական հասկացողության դեմ, դիալեկտիկական մատերիալիզմի գունհակացման դեմ այս խնդրում։ Բայց մենք պետք է նույնպես հակահարված տանք «ձախ» խոտորումներին՝ մեր հակակրոնական պրոպագանդայի մեջ, հակակրոնական պրոպագանդայի մեր թեորիայի մեջ։

Ճիշտ է, վերջին ժամանակներս մենք հետզհետե ավելի ջերհարձակում ենք տեսնում մեր դծի վրա այդ խնդիրների շուրջը,—այդ կողմից մենք որոշ հաջողության հասանք։

Բայց յեթե մենք դիտենք, թե ի՞նչ է արված արդյոք, որինակ, ամեն տեսակի գիտական ոժանդակ ձեռնարկներ պատրաստելու բնագավառում, կտեսնենք, որ մեզնում մինչև այժմ լավ նախապատրաստված ժողովածուն—«Լենինը կրոնի մասին» ժողովածուն է պակասում։ «Աթեիստի» ընկերները հրատարակեցին այդ գիրքը, դրանով նրանք դոհության արժանի գործ կատարեցին։ Մենք այդ ել չենք արել։ Ժամանակ է այժմ արտակարգ, հարվածային կարգով նպատակ դնել հրատարակելու այնպիսի ոժանդակ ձեռնարկներ, ինչպիսիք են՝ «Լենինը կրոնի մասին», «Մարքսն ու Ենգելսը կրոնի մասին», «Լենինն ու Պլեխանովը կրոնի մասին»։

Ձե՞ որ մենք մինչև այժմ չունենք նույնիսկ Դիդդենի գիրքը կրոնի մասին։ Մի՞թե՞ այդ պետք չի մեզ։ Մենք չենք հրատարակել՝ ինչպես պետք է, Լաֆարգի այն աշխատությունները, որոնք հրակայական արժեք ունեն։ Կա Լաֆարգի աշխատությունների վոչ լրիվ հրատարակություն, բայց ամենևին վոչ բոլոր նրա հակակրոնական աշխատությունները։ Պետք է հրատարակել մարքսիզմին հարող մի քանի անարխիստների աշխատությունները,—իհարկե, դանոթությունների, մեկնությունների հանդերձ։ Կա, որինակ, հայտնի հոլանդական անարխիստ Դոմելի Նյուվենհուիսի աշխատությունը, կան մի ամբողջ շարք ուրիշ աշխատություններ, որոնք սրահանջում են, որպեսզի մենք հրատարակենք, որպեսզի հնարավորություն տանք մեր ընկերներին նրանցով ուսանել և թեորիտիկորեն սնել։ Մենք հույս ունենք, որ այդ աշխատանքը այժմ կարագացվի։

«Վոյինստվույուշչեյ Աթեիզմի» («Մարտնչող Աթեիզմ») 1-ին

համարի 192 ելնում տրված է ԽՍՀՄ հակակրոնական հիմնարկների և կազմակերպությունների գիտական-հետազոտական աշխատությունների միասնական պլանը: Այդ պլանը մշակել են մեր մի ամբողջ շարք ընկերներ և այնտեղ մանրամասն կերպով թվահամարվում են այն խնդիրները, որոնք ծառացած են մեր առաջ:

Ցեռ կկամենայի մնայն այդ խնդիրներին, որոնք այստեղ դրված են, որինակ կրոնի ծագման խնդիրները, պատմության խնդիրները և այլն և այլն, ավելացնել մի շարք ե՛լ ավելի ակտուալ խնդիրներ, որպեսզի ուշադրությամբ դիտենք այն պրոցեսները, որոնք այժմ տեղի յեն ունենում և որոնք բնորոշում են կրոնի մահացումը· անհրաժեշտ է ուսումնասիրել կրոնի—մահացման—պրոցեսը այս անցողական եպոխայում և ցույց տալ թե ինչպես է վերանալու կրոնը ամենամոտիկ եռապներում:

Ի հարկե, պետք է ի նկատի ունենալ, որ այդ աշխատանքը կուսակցական կազմակերպությունների աջակցությունն է պահանջում: Մեզնում մի շարք կուսակազմակերպություններ արհամարհանքով են վերաբերվում հակակրոնական աշխատանքին:

Վլադիվոստոկից ինձ մի փաստաթուղթ են ուղարկել, որը չափազանց բնորոշ է այդ կողմից: Կուսակցական բջիջը կարմիր անկյունը փոխանակել է աղանդավորական աղոթատան շենքի հետ, կարմիր անկյունը դիջել է աղվենդիստների աղանդին: Ի հարկ է, այդ որոշումը փոխվել է, բայց այդպիսի որոշումը ցույց է տալիս, որ կուսակցության այնպիսի անդամներ կան, որոնք վոչինչ չեն հասկացել թե մենք ինչպես ենք վերաբերվում կրոնին: Չե՞ որ կուսակցությունը XVI համագումարումն ել ցուցումներ տվեց, թե պետք է ուժեղացնել, ամրացնել հակակրոնական պրոպագանդան: Այդ բանը, դժբաղդաբար, չի կատարվել:

Այդ կողմից մենք մի ամբողջ շարք փաստեր ունենք: Որինակ Կոստրոմի Լենինի անվան տեքստիլ ֆաբրիկայում կուսկոլեկտիվի քարտուղարը հայտարարում է, որ ՄԱՄ բջիջը տեղ չունի արտադրության մեջ, նրա տեղը հանրակացարանումն է, որ ֆաբրիկայում միայն արտադրական աշխատանք պետք է կատարվի: Սակայն նույն այդ ֆաբրիկայում միքանի հարյուր մարդուց կազմված չուրիկովյան-աղանդավորների մի խմբակ կա:

Ինչպես տեսնում եք, այնտեղ կրոնական աղանդներն իրենց բջիջներն ունեն և պայքարում են բանվորների վրա ազդեցություն ձեռք բերելու համար:

Իսկ կուսկոլեկտիվի այդ կույր քարտուղարն ասում է. «Իսկ դուք, ՄԱՄ, կորեք այստեղից»: Դրանով նա չուրիկովյանների պայքարի առաջարկն է մերժում:

Մի քանի կազմակերպություններում փորձեր են անում նվազագույն դիմադրության գծով ընթանալու,—նուիրպես յուրատեսակ ողորմություն:

«Ի՞նչ կարիք կա այդքան ընկերությունների»: «Անդրազիտության դեմ պայքարող ընկերություն», «Մանուկների բարեկամ», «Մարտնչող անաստվածների միություն», «ՄՈՊՐ»—չի՞ կարելի արդյոք այդ բոլորը ձուլել միասին»:

Ի հարկե, կարելի յե ձուլել ինչ կամենաս, սակայն այդպիսի ձուլումը կնշանակեր, որ վոչ մի բնագավառում աշխատանք չեր տարվի այնպես, ինչպես պետք է, որ այդ առանձին կազմակերպություններից ամեն մեկի քաղաքական խմառը պետք է բոլորովին կոծկվեր:

Մեզ վիճակվում է այդպիսի փաստերի հետ գործ ունենալ շատ կազմակերպություններում: Ուստի կարևոր կլիներ, որպեսզի ՄՄԴԸ—մարտնչող մատերիալիստ-դիալեկտիկների ընկերություն—կոնֆերանսը չեչտեր, թե անհրաժեշտ է, որ մեր կուսակցական, արհմիութենական և կոմյերիտմիության կազմակերպությունները ամենաուշադիր կերպով վերաբերվեն հակակրոնական աշխատանքին:

Կոմյերիտմիությունը հանդիսանում եր և հանդիսանում է առաջամարտիկը մեր ամենալավ առաջնակարգ նախաձեռնությունների մեջ: Սակայն այժմ նա հակակրոնական աշխատանքի բնագավառում չափազանց շատ հետ է մնում: Որինակ Կաշիրսկու կոմյերիտմիության անդամը հայտարարում է. «Սպանեցե՛ք ինձ, մինչև այժմ չեչի կարծում, թե հակակրոնական աշխատանքը դասակարգային պայքարի մասն է հանդիսանում»:

Ահա թե վո՛ր ոլորտի անմեղություն է տիրում այդ մասում:

Դժբաղդաբար, բջջի այդպիսի քարտուղարը միայնակը չէ:

Մեր առաջ ամենախոշորագույն բարդ խնդիրներ են ծառացած: Նրանց լուծումը կոդնի միլիոնավոր մասսաների գիտակցության վերափոխմանը, մատերիալիստական աշխարհահայացքի մշակմանը:

Այդ բանը խոշոր չափով մոտեցնում է սոցիալիզմի հաղթանակը:

Մարքսն ասաց, որ դաղափարները նյութական ուժ են դառնում, յերբ նրանք մասսաներին են տիրում: Այս կողմից մեծ է մեր

հակակրոնական աշխատանքի նշանակությունը,—նա մեր մասսային հաղորդակից է դարձնում այն անսակի գաղափարներին, որոնք նրան մի քանի անգամ ավելի ուժեղ են դարձնում։

Մենք պետք է ամենայն լրջությամբ վերաբերվենք մեր առաջ դրված խնդիրներին, հաղթահարենք մի ամբողջ շարք կազմակերպությունների արհամարհական վերաբերմունքը կրոնական պրոպագանդայի հանդեպ, ցույց տանք, որ այդ խնդիրներում մարտնչող մատերիալիզմից հեռանալը լենինիզմից հեռանալ է նշանակում։

Լենինիզմն անբաժանելի է մարտնչող աթեիզմից, այս բանը շատերս չենք հասկանում, կարծելով՝ թե կարելի է լենինիստ լինել, միաժամանակ առանց մարտնչող աթեիստ լինելու։ Մարտնչող աթեիզմի հաղթանակը միաժամանակ լենինիզմի հաղթանակն է։

Հանրապետական գրադարան
ՀԱՍՀ—ԳՍՌԱ
им. А. Мясникяна
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

---

15 ԱԱԳ. (1¹, 2 մ.)

ЕМ. ЯРОСЛАВСКИЙ

АЧИ АНТИРЕЛИГИОЗНОЙ ПРОПАГАНДЫ В ПЕРИОД СОЦ. НАСТУПЛЕНИЯ

Госиздат ССР Армении
Эривань—1931

0